

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄԻՆ

ՆԻՍՏԵ

2 ՅՈՒՆԻՍ 1881



Կ. ՊՕԼԻՍ

1881

ԴԻԻԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԿՐԻՍՏՈՍԻԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՅԻ ԴԻՆ

Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւապետ
Ա.ա.քեղ էֆէնտի Ալթուն Տիւրքի	Բ. »
Բրիտանացի էֆէնտի Ղազարոսեան	Գ. »
Միհրան էֆէնտի Չոպանեան	Ա. Արեւապետ
Նշան էֆէնտի Պոյանեան	Բ. »
Տիգրան էֆէնտի Հիւնքեարպէյէնեան	Գ. »

Ձեռնաստրեան դիւան

Տ. Մատթէոս եպիս. Իզմիրլեան
Տ Գէորգ Մ. Վարդ. Բուսնուզլեան
Պապի էֆէնտի Պապոսեան

Գաստիսկուրեան դիւան

Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Լէւոն էֆէնտի Գախամանեան
Գասպար էֆէնտի Չերազ

Կարուածոց դիւան

Բրիտանացի էֆ. Ղազարոսեան
Աբրահամ էֆէնտի Մուրատեան
Մատթէոս էֆէնտի Ալիբաբեան

Համարակալութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արչակ
Ստեփան էֆէնտի Փափազեան
Յակոբ էֆէնտի Հանեան

Յարսբերութեան դիւան

Յարութիւն էֆէնտի Նորատունկեան
Ալիբաբան էֆէնտի Խօրատանճեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Իրաւաստրեան դիւան

Եղիշէ վարդապետ Ա. յվապեան
Կառնիկ էֆէնտի Յովակիմեան
Աւետիս էֆէնտի Պէշիբեան

Նախանեռնութեան դիւան

Ա.ա.քեղ էֆէնտի Ալթուն-Տիւրքի
Նշան էֆէնտի Պոյանեան
Յովհաննէս էֆէնտի Թորոսեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆէնտի Խլթիւնեան
Աւետիս էֆէնտի Սուրենեան
Մկրտիչ էֆէնտի Մէզպուրեան

Ելեւմտից յանձնախումբ

ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄՍ

Ն Ի Ս Տ Ե .

2 ՅՈՒԼԻՍ 1881

ՆԱԽԴԱՀ. — Սիմէոն Կախակոպոս Մէֆէրեան (առժամեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Յարութիւն էֆէնտի Մէրեւէմ-Գուլի

ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ	ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ	ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ
Ա. Վիճակ	(Ա. Վիճակ)	ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ
1 Կարապետ եպ. Սերոբեան	Գումգաբու, Կետիկ փաշա	47 Աւետիս Տէր Սահակեան Բ
2 Սիմոն եպ. Մէֆէրեան	Եւ Գումգաբուի դուրս	48 Իսկիւտար Ս. Կարապետ
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ Պ	24 Գրիգոր Պէրպէրեան	49 Միհրան Պահճէզափուն Բ 2
4 Կարապետ Գ. Սէթեան	22 Կարապետ Աղարդմանեան	50 Պօղոս Թորգոմեան Բ
Բ. Վիճակ	23 Համբարձում Մազպուլեան	51 Տրդատ Փափազեան
5 Մատթէոս եպ. Իզմիրլեան	24 Մինաս Գափամանեան	52 Յակոբ Հանեան
6 Պօղոս Վ. Խօլտամեան Բ Պ	25 Սարգիս Աղարէկեան Բ Պ	(Գ. Վիճակ)
7 Յովհաննէս Գ. Մկրեան	26 Սենեքերիմ Մանուկեան Բ	Գասըմ բաշա
8 Գրիգոր » Աճէմեան Բ 2	27 Բարթոլ Բարբէրեան	53 Գասպար Չերազ
Գ. Վիճակ	28 Գէորգ Ազատլահեան Բ	Բերա
9 Գրիգոր եպիս. Տ. Պօղոսեան Բ	29 Յ. Մէրեւէմ-Գուլի	54 Արիկ Ունճեան
10 Յակոբ Վ. Ա. Փափազեան	30 Տիգրան Հիւնքեարպէյէնեան	55 Գրիգոր Մէլիմիէճեան
11 Ոհան Գ. Տ. Սարգսեան Բ Պ	31 Աւետիս Սուրենեան	56 Գրիգոր Օսեան Բ Պ
12 Խորէն » Փէշիբեան	32 Տօքթ. Յ. Թիրեաքեան	57 Ղազար Հովուեան
Գ. Վիճակ	33	58 Յարութիւն Նորատունկեան Բ Պ
13 Գէորգ Վ. Բուսնուզլեան	34	59 Յարութիւն Պէլեան
14 Եղիշէ » Ալիազեան	35	60 Նշան Պոյանեան
15 Յովհաննէս Վ. Սրշարունի	36	61 Վիշէն Օրմանեան
16 Յովհաննէս Գահ. Հիւնքեարպէյէնեան	37	62 Տէլէմաք Էքսէրճեան
Ե. Վիճակ	(Բ. Վիճակ)	Միջագիւղ
17 Խորէն Արքե. Նար Պէյ	Պէշիկբաշ	63 Յակոբ Պ. Նորատունկ Բ
18 Յովհաննէս Վ. Փափազեան	38 Ալիքսան Խօրատանճեան	67 Տիգրան Եուսուֆեան Բ Պ
19 Գարեգին » Թաթարեան	39 Բարսեղ Հալանեան	65 Մկրտիչ Գազանճեան Բ 2
20 Սուրբիս Գահ. Ստեփանեան Բ Պ	40 Յովհաննէս Քէրէստէճեան	66
Բ. Բացակայութիւն առաջին :	Եկնիգաբու	67
Բ.2 Բացակայութիւն երկրորդ :	41 Լեւոն Գարամանեան	Պէյգօզ Եւ Ղալափա
Բ.Պ Բացակայութիւն երրորդ :	42 Մարուպէ Յրէնկեան Բ	56 Միքայէլ Մամիկոնեան
	43 Պօղոս Էքսէրճեան	(Գ. Վիճակ)
	44	Գուգիւնճուգ Եւ Իճատիէ
	Իսկիւտար Ս. Խաչ	70 Գրիգոր Ներսէսեան
	45 Սիմոն Ֆէլէկեան	70 Մկրտիչ Մէզպուրեան
	46 Տօքթօր Յ. Շիշմանեան Բ 2	



71 Գառնիկ Յովակիմեան	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
72 Կարապետ Հաղարեան Բ	Կարին	124 Ստեփան փափաղեան
73 Նարլըգաբու	101 Սերովբէ Ազնաւորեան	Տիվրիկ
74 Եկեմիմանայիկ Սամաթիոյ	Քեօբանեա	122 Նշան Գարագաշ
75 Քօփգալիու	102 Անդրիանուպօլիս	Զեյթուն և Մարաշ
75 Տ. Կ. Հիւնքեարպէյնեան	103 Յակոբ Պարոնեան	123 Տրապիզօն
Էյուպ Ս. Եղիա և Ս. Աստուածածին	սմբիկղիա	124 Պաղտատ
76 Գուրուբէշմէ	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	125 Մէլքօն Իսկէնտէրեան Բ 5
77 Համբարձում Իրէքճեան	Ակն	Տիգրանակէրտ
Հիսար և Պօյաճի գիւղ	105 Ղարաճիսար	126 Միհրան Զօրանեան
78 Սենեքերիմ Կիւլպէնկեան	106 Արաբկիր	Վան
Նոր գիւղ և Սրեմիա	107 Կարապետ Խաչիկեան	127 Աղբամար
79 Պալատ	Բաղէշ	128 Հայեպ և Այնթապ
80 Սահակ Ղազարոսեան	108 Պրուսա	129 Սեբաստիա
81 Տիգրան Բարաղամեան	109 Քրիստոստուր Ղազարոսեան Բ	130 Մկրտիչ Յ. Մէլքեան
82 Մկրտիչ Կիւմրուչեան	Եղովկա	Ռուսճուգ
Քարակեօմրիկ	110 Ամասիա	134 Կարս
83 Յովհաննէս Թորոսեան	111 Համբարձում Ալաճաճեան	132 Աբրահամ Յ. Այվազեան
84 Կարապետ Փանոսեան	Բալու	Զմշկածագ
(Ե. Վ. ճակ)	112 Յովհաննէս Ազնաւորեան	133 Գաղատիա
Սամաթիա	Եղեսիա	134 Ատանա
85 Ալիքսան Պէշիրեան	113 Յակոբ Իւթիւճեան	135 Սդերդ
86 Եղիազար Մէլքեան	Մանճըլըխ	136 Մատթէոս Ալէքսանեան
87 Մինաս Ճաֆճաֆեան	114 Հանըն	Եօզղատ
88 Նազարէթ Շահպաղեան	115 Երզնկա	137 Լօղօֆէթ Պալեօղեան Բ Պ
89 Յարութիւն Թիւլեան	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ	Մալաթիա
90 Յակոբ Արշակ	Թեքիրտաղ	138 Գէորգ Վարդանեան
91 Սեպուհ Թիւլսիւզեան	117 Տիգրան Գ. Սինանեան	Իգմիր
92 Մինաս Էմիրեան	Կեսարիա	139 Պապի Պապօեան
93 Վիլէն Գապառաճեան	118 Գէորգ Գըլըճճեան	Եգիպտոս
94 Թագուր Էրկանեան	Խարբերդ	140 Աբրահամ Մուրատեան Բ
Խասգիւղ	119 Պալքբէսէր	
95 Առաքել Ալթուն Տիւրքի Գ	120 Ստեփան Գօլօրեան	
96 Ռէթէոս Պէշիրեան		
97 Սարգիս Քալուքճեան Բ Պ		
98 Ռէթէոս Թաղէոսեան		
99 Ռուբէն Պուլիուրեան		
100 Նիկողոս Թիւլպէնտճեան		

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Պատրիարքական խնդիր .

Ի բացակայութեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր՝ Ատենապետ Էֆէնտի առեանը բացաւ ի Ճամ՝ 2 3/4, և առժամեաց Նախագահութեան հրատարեց զՏէր Սիմէն Սպիտակոս :

Ներկայ Երեւոյթեանայ թիւն էր 65, որ տպա 85 ի յանդեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս նշանակած եմ, Տեարք Երեւոյթեան, առ Ձեզ ուզղած հրատարակելու մէջ, Ժողովն այսօր յարտաստիւր նիստ կը գումարի, Պատրիարքական խնդրոյն համար :

Գրեթէ թէ այս խնդիրն անցեալ նստին ծագեցաւ, երբ Ս. Պատրիարք Հայրն՝ իր պաշտօնին չորս օրէն վերջ դնելը ծանուցուցիւ Նորին Սրբազնութեան հրամարականն, և անմիջապէս սրտագամաւորութիւն մը կարգեցիւ, հրամարականն ետ առնել տարւ սրտածնով :

Ձեր պատգամաւորութիւնը փութացեր էր առ ինքն եղած յանձնարարութիւնն անմիջապէս կատարել, բայց հակառակ իր ամեն ջանից՝ չյաջողելով հրամարականն ետ առնուլ

տալ, նոյն օրէն տեղեկագրեր էր Գիւանիս իւր պաշտօնին արդիւնքը. առաջարկելով միանգամայն՝ որ Վարչական Խորհուրդը փութաց բանակցիլ հրամարանն խնդրոյն վրայ, ընդ Ամեն. Պատրիարք Սրբազանն, և Ազգ. Ժողովն յարտաբոյ կարգի նիստ գումարի, մինչև Յունիս 30, այսինքն մինչև անցեալ երեքշաբթի օր : Ձեր պատգամաւորութիւնը կը յուելուր նաև թէ՛ զուցէ օգտակարաղոյն լինի նիստը դանփակ գումարել :

Կարգամ Ձեզ նորա տեղեկագիրն :

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի Մայր Գիւանի Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Այսօր, 25 Յունիս, Ազգ. Ժողովոյ կողմանէ արուած որոշման համեմատ, պատգամաւորութիւնն ներկայացաւ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր և յայտնեց Նմա թէ ընդհանուր Ազգիկն ներկայացուցիլն եզոզ Ազգ. Ժողովն, յետ խորհրդածութեան, միահամուռ չընդունեց Նորին Բարձր Սրբազնու-

Թեան հրաժարականը, և խնդրեց որ, ըստ ծանուցեալ ազգասիրութեանն և անձնուիրութեանն, բարեհաճի Ազգին բաղձանաց համաձայն շարունակել իւր պաշտօնն, և եթէ ներքին դժուարութենէ կը ներդուի, Ազգ. վարչութեան հետ համորոշ և ճշգեալ ներկայացնէ այն դժուարութիւններն՝ ցուցնելով նաև նոցա դարմանքը:

Նորին Բարձր Սրբազնութիւնն, ի պատասխանի Պատգամաւորութեանս նոյն առաջարկին, յայտնեց թէ վերջնաբար տուած է իւր հրաժարականն և Յունիս 30 է յետոյ ոչ ևս է Պատրիարք, ի զուր Պատգամաւորութեանս իւրաքանչիւր անդամք աղաչեցին զՆորին Բ. Սրբազնութիւնն որ չը դիմագրէ Ազգ. Ժողովոյ որոշմանն և ընդհանուր բաղձանաց, Նորին Բ. Սրբազնութիւնն խաղառ պընդեց իւր հրաժարականին վրայ և մինչև իսկ անկարելի եղաւ Պատգամաւորութեանս՝ խոստումն առնուլ Նորին Բ. Սրբազնութենէն որ գոնէ մինչ ժողովոյն գումարման օրն, որ է Յունիս 2, հաճի շարունակել Պատրիարքական պաշտօնը:

Իրաց այս վիճակին մէջ Պատգամաւորութիւնս անհրաժեշտ հարկ կը համարի անմիջապէս հաղորդել սոյն բանակցութեան արդիւնքն առ Մայր Դիւանդ, միանգամայն և կը յայտնէ իւր միաձայն կարծիքն սոյն ծանրակշիռ պարագային առ չև, այսինքն, նախ առաջարկել Մեծ. Ատենապետիդ որ բարեհաճի հաղորդել մեր սոյն տեղեկագրոյն արգիւնքն առ Մեծ. Ատենապետն վարչութեան և Նորա հետ խորհրդակցելով որ յառաջ հրաւիրել զվարչական Խորհուրդն ի Ժողով, որպէս զի նա փու-

թայ բանակցիլ հրաժարման խնդրոյն վրայ ընդ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին որ, կը կրկնեմք ըսել, թէ ամսոյս մինչ 30 միայն կընդունի Պատրիարքական պաշտօնը. ընդ նմին և առաջարկել Մեծապատիւ Ատենապետիդ որ, եթէ վարչական բանակցութենէն ևս բաղձայեալ արդիւնքն չը կարենայ գոյանալ, բարեհաճիք Յունիս 30 էն յառաջ, կամ գոնէ մինչ նոյն օր, հրաւիրել զԱզգ. Ժողովն յարտաբոյ կարգի նիստ, որ գուցէ օգտակարագոյն կը լինի եթէ լինի ԳՊԻՊԻ:

Մնամք յարգանք

Գրէ՛ք Եղ. Տ. Պօլեմէն Խորէն Արեւիկայի
 Թ. Բ. Միլիտան Ա. Ա. Սարգիսեան
 Տ. Յ. Թիւրքիսեան

Ղալաթիա 25 Յունիս 1884

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս տեղեկագիրն հետևեալ օրն ստացայ, և անոր յաջորդ օրը կրցի տեսակցիլ վարչական Խորհուրդը վսեմ. Ատենապետին հետ և զայն իրեն հաղորդել, յորմէ տեղեկացայ թէ վարչական Խորհուրդն հրաւիրեալ էր արդէն գումարել երկու օր յետոյ, օրակարգ ունենալով՝ Պատրիարքութիւնը ներքին դժուարութիւններէ տղատելու համար՝ ճշգեալ առաջարկ մը պատրաստել Բարձրաչընորհ Պատրիարք Զօր հետ համախորհուրդ, առ ի ներկայել զայն Ազգ. Ժողովոյդ, ինչպէս յանձնարարեալ էր իրեն:

Ըստ սցամ վարչական Խորհուրդը գումարուեր էր, և սակայն՝ ինչպէս առ մեզ յըզած պաշտօնագրէն կը հասկցուի՝ զեռ ևս իւր բանակցութիւնքն ընդ Ամեն. Պատրիարք Զոյրն չէ կրցած ստարտել, որպէս զի իւր առաջարկը ներկայէ Ժողովոյդ:

Աւասիկ նոյն պաշտօնագիրն, որոյ մէջ վարչական Խորհուրդն իւր կարծիքն ալ կը յայտնէ հրաժարման խնդրոյն վրայ:

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի Ազգային Ժողովոյ.

Ազգ. վարչական Խորհուրդն ստացաւ Ձեր վսեմութեան Յունիս 27 թուականաւ նամակն, որ Ազգ. Ժողովոյ ներկայ տարեշրջանի Ա. նիստին մէջ Պատրիարքական խնդրոյն առթիւ տրուած մի որոշումն կը հաղորդէր և անոր գործադրութիւնը կը պահանջէր Յունիս 2ին գումարելի Ազգ. Ժողովոյ նիստէն առաջ:

Ազգ. վարչական Խորհուրդն սոյն յանձնարարութեան գործադրութեան համար Ամեն. Սրբազան Պատրիարք Զօր հետ սկսած է թէև բանակցիլ, սակայն այս բանակցութիւնն զեռ ևս եզրակացութեան մը յանգած չըլլալուն՝ վարչական Խորհուրդն չէ կարող այսօր որ և է առաջարկ մը ներկայել Ազգ. Ժողովոյ:

Իսկ Ամեն. Սրբազան Պատրիարք Զօր հրաժեշտի խնդրոյն դալով Ազգ. վարչութեան վերջնական կարծիքն այն է թէ՛ պէտք չէ ընդունուի Նորին Սրբազնութեան հրաժարականն:

Ի Դիմաց Ազգ. վարչական Խորհուրդոյ
 Վ. Ատենադպրի Վ. Ատենապետի
 Ս. ԱԶՆԱԻՈՐ Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Կ. Պօլիս 1 Յունիս 1884

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոյն վերաբերեալ պաշտօնական տեղեկութիւնք այսչափ են, զոր հաղորդեցի Ձեզ: Ասոնցմէ զատ ժողովոյդային

հանրագիր մը կայ, որ պաշտօնական հանգամանք չկրնար ունենալ, և որոյ վրայ խօսելէ յառաջ պէտք է Ձեր ուշադրութիւնն հրաւիրեմ՝ դռնփակի խնդրոյն վրայ, զորմէ Ձեր Պատգամաւորութիւնը խօսած էր իւր տեղեկագրին մէջ: Պատգամաւորութեան առաջարկըն իւր կարևորութիւնն ունի անշուշտ, և Գիւանս լաւագոյն համարեց՝ փոխանակ ինքնին տնօրինելու՝ Ժողովոյդ նկատողութեան ենթարկել զայն, և Ձեր որոշմամբ նիստը դռնփակի վերածել, եթէ արժան համարիք: Ուստի՝ խնդրոյն մէջ աւելի յառաջ չգացած՝ կը խնդրեմ որ այս կէտին վրայ խօսք առնուք, կարծիք յայտնէք, և նախապէս զայն որոշէք:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ զանրաց լինի նիստը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը կրկնեմ:

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ի դիմաց Պատգամաւորութեան կը յայտարարեմ որ նիստը դռնփակ ընելու հարկը վերցած է այլ ևս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն զանրաց կը շարունակեմք նիստը:

Ինչպէս յիշեցի բիշ մ'առաջ, ժողովրդային հանրագիր մը կայ, որ 1300 ստորագրութիւն կը կրէ, և Ղալաթիոյ Թագ. Խորհրդէն վաւերացեալ է: Սոյն հանրագիրն ստորագրողքցաւ կը յայտնեն Ս. Պատրիարք Զօր հրաժարականին վրայ և կը փախաբին որ Ազգ. Ժողովը մի անգամ ընդ միշտ մերժէ զայն: Տարակոյս չկայ թէ գովելի զգացում մ'է այս, և ամբողջ Երեսփոխանութեան բաղձանաց կը համապատասխանէ: Սակայն օրինաւորութեան սահմանը չեղծանելու համար, պէտք է յայտարարեմ ի Գիւանէ թէ՛ այս հանրագիրը պարզապէս ըզծից արտայայտութիւն մը կըրնայ նկատուիլ Ժողովիդ և անկէ անդին զօրութիւն չունի: Եթէ հանրագիրն ստորագրողք

կը կարծեն թէ Ժողովոյս ատկը որոշման վրայ կրնան ազդեցութիւն ունենալ իրենց հանրագրով, չարաչար կը սխալին, զի իրենք՝ որչափ ալ բազմաթիւ լինին՝ անշուշտ ամբողջ Ազգը չեն ներկայեր, և թէ Ժողովս է միայն Ազգին օրինաւոր ներկայիչը։ Սահմանադրական Ժողովուրդ մ'որ Երեսօխականական Ժողով ունի, ինք կը նորէ հոն բազմազ Երեսօխականներն և այդ ընտրութեամբ իւր ձայնն անոնց կը յանձնէ հաւաքապէս, այնուհետև կարող է իւր իղծերն ու բաղձանքը ներկայել իւր Երեսօխականաց, բայց իրաւունք չունի պահանջել ի նոցանէ որ համակերպին իւր ըզմից այս կամ այն խնդիրն որոշելու համար։ Մեր Ժողովուրդն ալ՝ ըստ որում սահմանադրական՝ այսպէս պէտք է վարուի իւր Երեսօխականաց հետ, որք անտարակոյս սիրով ունին կը դնեն Ժողովրդեան ձայնին, բայց իրենցմէ ոչ ոք պարտաւոր է իւր կարծիքը զոչելու կամ ծածկելու, եթէ համաձայն չլինի Ժողովրդային բաղձանաց, զի սահմանադրութեան ոգւոյն դէմ կը մեղանչեն բացարձակապէս՝ երբ Ժողովրդեան մի մասին բաղձանքը գոհացնելու համար կարծիք յայտնեն և որոշում քուէարկեն ազգային խնդրոց մէջ։ Նպատակս Ժողովրդեան ձայնն անարգել չէ բնաւին, միայն թէ օրինաւորութեան սահմանը պահպանելու համար փոխադարձ պարտիք ու իրաւունքն յիշեցնելու հարկ տեսայ։ Դիւանին այս յայտարարութենէն յետոյ՝ հանրագրոյն ընթերցումը կուզէք ըսել, այնպէս չէ, Տեարք Երեսօխականս։

ՁԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Այո՛, այո՛։

Հետևաբար Ատենադպիր Էֆէնտին կընթեանու Ժողովրդային հանրագիրն, որոյ պատճէնը դրուած է յաւարտ ատենագրութեանս։

ԹԻՒՆՊԵՆՏՃԵԱՆ Ն. ԷՖ. — Օրուան խընդ.

րոյն անցնելէ առաջ ներումն կը խնդրեմ կատարելու համար պարտաւորութիւն մ'որ քաղցր ու նուիրակիան է ինձ համար։ Երեսօխականական ընտրութեանս համար յատկապէս իմ խորին շնորհակալիքս կը յայտնեմ այն թաղին որ իմ ծննդավայրն և որրանն եղած է. նոյնպէս ջերմագիրն շնորհակալութիւնս կը յայտնեմ Ժողովոյս որ այս անգամ բարեհաճեցաւ վաւերացնել ընտրութիւնս և իւր օրինական պարտականութիւնը կատարել։ Իսկ զաւով այն խել մը կատկածանաց որ շատեր ունեցեր են իմ վրաս, այս մասին բան մը չեմ ուզեր ըսել, զի ընտրութեանս վաւերացումը բաւական ջրնջում մ'է այդ կատկածանաց։ Իսկ իմ պաշտօնավարութեանս եղանակն, որ իմ ծանօթ գաղտնարացս հետեւողութիւնը պիտի լինի, ապագային կը թողում գտտել։

Կանցնիմ օրուան խնդրոյն որ շատ չարագուշակ կը գտնեմ, այն է Պատրիարքական խնդիրը։ Այս խնդիրն արդէն երկու ամիս առաջ կստանար գալ Ժողովոյս, սակայն հիմայ կը ներկայանայ այնպիսի պարագայներու մէջ, որոց առաջ Ժողովս բան մը չկրնար ընել։ Նախորդ նստին Ժողովս հանդիսապէս մերժած էր Ս. Պատրիարք Հօր հրաժարականը այժմ հրաժարականի խնդիր չկայ. մերժուած է այն։ Եթէ Ժողովս այսօր զբաղում մ'ունի, այն ալ պիտի լինի մտածել այն միջոցներն, որով կարող պիտի լինի Նորին Սրբազնութեան շարունակել տալ իւր պաշտօնը. զայս խորհել և տնօրինել պարտիմք այսօր։ Երկու ամիս առաջ Ս. Պատրիարք Հօր ներկայացող Պատգամաւորութիւնն իւր տեղեկագրոյն մէջ եզրակացութիւն մ'ունէր որ Վարչութեան յղուեցաւ։ Վարչութենէն կը յուսայինք որ իւր որոշումներն օր յառաջ ծրագրեալ պիտի ներկայէ Ժողովոյս, որ հարկ եղածը պիտի տնօրինէր, որպէս զի Ս. Պատրիարքը, որ ամենուս սիրելին և արժանաւորագոյնն՝ միանգամայն ներկայ խնդրոց մէջ ձեռնհաս է, կարենայ իւր պաշտօնը շարունակել, զերծ ամենայն խոչընդոտներէ։ Իժարազարար Վարչութեան մէկ զրէն, զոր

Դիւանը Ժողովոյս հաղորդեց, կը տեղեկանամք թէ Ս. Պատրիարքին հրաժարման սրտաճառներն տակաւին որոշում մը չեն կրած և չեն կրցած ներկայանալ Ժողովոյս։ Այսօր քանի որ խընդիրն այս անորոշ վիճակին մէջ կը գտնուի, Ժողովս բան մը չկրնար ընել։ Ուստի կեզրակացնեմ, և քանի որ Ժողովոյս ներկայանալիք ծրագիր մը չկայ այսօր, կառաջարկեմ թողու այս խնդիրը մինչև որ այդ ծրագիրն ներկայի Ժողովոյս, և անցնիլ օրակարգին։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թիւլայէնտճեան Էֆէնտին իւր եզրակացութեան մէջ տուածակեց անցնիլ օրակարգին։ Որպէս զի մի գուցէ չլիթութիւն մը ծագի աստի, ուրիշ խօսք չը տուած կը յայտարարեմ թէ՛ Ժողովս այսօր մի միայն Պատրիարքական խնդրոյն համար գուժարուած է և անկէ ուրիշ օրակարգ չունի։

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ինչպէս յայտարարուեցաւ, Ժողովս հրաւիրուած է այսօր Պատրիարքական խնդրոյն համար։ Ս. Պատրիարքը կը հրաժարի և հրաժարած եմ կըսէ, զլիսաւոր պատճառ ցուցնելով իւր անձնական տիրութիւնը, և կըսէ թէ հիւանդ եմ։ Թող ծանր չթուի այս բեմին յայտարարել թէ այն օրէն ուր եկեղեցական մը թագ դրած է իւր գլուխը, այն օրէն նա իւր կեանքն Ազգին նըուիրած է. հետեւաբար տարակոյս չկայ թէ Ս. Պատրիարքը պէտք չէ անձնական տիրութեան պատճառաւ հրաժարի այն գահէն որուն վրայ միշտ զինքը տեսնել կը բաղձայ Ազգը։ Նորին Սրբազնութիւնը կրնայ ուրիշ պատճառներ ալ ունենալ. այս սրտաճառները կրնան երկուրի բաժնուիլ, արտարին և ներքին։ Արտաքին սրտաճառներուն վրայ չեմ ուզեր խօսիլ, զի քաջ գիտէք դուք թէ ի՞նչ են նորս։ Գաղով ներքին սրտաճառներուն, եթէ կան, չեմ յուսար թէ այնպիսի մեծ բաներ ըլլան որ

կարենան զրազեցնել զմեզ. զի Ժողովս փոխեց Վարչութեան դրութիւնն, և այդ դրութեամբ պէտք չէ որ Ս. Պատրիարք Հօր ձեռներն կառուին և կամ այնպիսի խնդիրներ ծագին որ զինքն հրաժարման առաջնորդեն։ Եթէ անհամայնութիւն մը կայ, ընդ մէջ Ս. Պատրիարք Հօր և Վարչութեան, կրնայ իրր անհամայնութեան խնդիր՝ գալ Ժողովոյս և իւր լուծումն ստանալ, սակայն եթէ իրաւ անհամայնութիւն մը կայ, պէտք չէ այս խնդիրն այս ձևով գոյ Ժողովոյս, քանի որ Վարչական օրէնքը փոխուած է այժմ։ Նորին Սրբազնութիւնն անցեալ օր, երբ իւր քով կը գտնուէինք Տ. Եղիշէ Վարդապետ, Փափաղեան Էֆէնտին և ես, խօսակցութեան միջոցին կը յայտարարէր յաճախ՝ թէ իւր հրաժարականն օգտակար կրնայ լինիլ Ազգին։ Մէք չկրցինք համոզում գոյացնել թէ Նորին Սրբազնութեան հրաժարականը կրնայ սրդարեւ՝ մտնուանդ այս ժամանակիս մէջ՝ օգտակար ըլլալ Ազգին։ Ես չեմ հաւատար ըսի յայնժամ և հարկաւ դուք ալ ինձ հետ չէք կրնար Հուսատալ այս կարծեաց ուղղութեանը. զի Նորին Սրբազնութիւնն որ չէ գաղթած Ազգին համակրութիւնը վայելելէ, որ Ազգին գործերը վարելու մէջ եղանակն հանդիսացած է, և որ՝ ինչպէս կը յիշէք՝ ամեն անգամ որ Ժողովը կը բանար, յուսալից եմ կըսէր, ի՞նչպէս կըլլայ որ իր օրով և իր ձեռք սկսած մէկ գործն այսօր թողու ուղէ և բաշտի երթոյ։ Խիստ փափակ կէտ մ'է այս զոր ձեր ուշադրութեան կը յանձնեմ։ Ուստի խօսքս չերկարելու համար կուզեմ եզրակացնել այսպէս. ինչպէս որ Պատկառելի Ժողովը մինչև հիմայ միշտ մերժած է Նորին Սրբազնութեան հրաժարականն և չէ ընդունած, այնուհետև ևս պէտք է մերժէ, և յանձնարարէ Վարչութեան որ, եթէ Ս. Պատրիարք Հայրը հրաժարման զօրաւոր սրտաճառներ ունի, բնէ զայնս և մինչև յառաջիկայ հինգչաքթի օր տեղեկագրէ մեզ, որպէս զի Ժողովս ալ այդ սրտաճառներով զրազի։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը նկատեմ որ խօսից կարգին մէջ անուն չկայ նշանակուած, և ինձ կը թուի թէ խօսք ուղղ շատ չգտնուելուն պատճառն այն է որ՝ Երեսփոխանաց մէջ կարծեաց անհամաձայնութիւն չկայ խնդրոյն վրայ: Եթէ իւրաքանչիւր Երեսփոխան խօսք առնու և խօսի, սխալ տեսնեմ որ ոչ սբ Ս. Պատրիարք Հօր հրատարականն ընդունելու տրամադրութիւն ցոյց սխալ տայ: Այս վիճակին մէջ, եթէ կուզէք, Ձեր Դիւանը՝ պաշտօնական և անպաշտօն բանակցութեանց և Երեսփոխանաց տրամադրութեան վրայ յենեալ՝ բանաձև մը կը ներկայէ Ձեզ ի բռնարկութիւն, զոր անշուշտ կրնար բարեփոխել, եթէ սկտք լինի:

Ձայս ըսելով՝ Ատենայետ Էֆէնտի հետ տեսալ բանաձևը կը ստորագրէ և ժողովին կը ներկայէ ի Դիւանէ:

«Ազգային ժողովս ցաւելով իմացաւ իւր Պատգամաւորութեան տեղեկագրէն որ Ս. Պատրիարք Հայրն պնդեց իւր հրատարականին վրայ»:

«Գիտէ նաև թէ Նորին Ամենապատուութեան անձին տկարութիւնը յանհարինս կը նեղէ զինքն Պատրիարքական դահուն վրայ»:

«Եւ սակայն նկատելով որ Ամեն. Ներսէս Ս. Պատրիարք Հօր վրայ ընդհանուր Ազգին անսահման վստահութեանէն զատ, Ազգային շահուց գլխովին անհամաձայն է՝ իրաց արդի վիճակին մէջ՝ Պատրիարքական խնդիր յարուցանել, կը մերժէ իսպառ իւր սիրեցեալ Պատրիարքին հրատարականն»:

«Եւ հրաւէր կը կարգայ Նորին Սրբազ-

նութեան ազգասիրութեանն, որ Ազգին կամաց առջև բարեհաճի շարունակել իւր զոհողութիւնն, Պատրիարքական պաշտօնը պահելով, մինչև որ սլարագայները ներեն զայն ընդունել»:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ — Շատ լաւ, բայց վերջին խօսքն աւելորդ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանին ներկայածն առաջարկութիւն մ'է, և Դուք կարող էք բարեփոխել զայն: Այդ վերջին մտքը՝ «մինչև որ պարագայները ներեն զայն ընդունել», Ձեր կարծիքներն հաշտեցնելու և նոյն խի Նորին Սրբազնութիւնը կարենալ համոզելու մտքը դրուած է: Եւ սակայն Դիւանը պատճառ չունի անոր վրայ պնդելու, ժողովն ինչ-պէս որ կուզէ, այնպէս թող բարեփոխէ:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Դիւանին կողմանէ առաջարկեալ բանաձևին վրայ չսխալ խօսիմ, այլ միայն նորա վերջին մասին վրայ: Ատենայետ Էֆէնտին այդ վերջին մասը Նորին Սրբազնութիւնն համոզելու դիւրութեան համար դրինք կըսէ. բայց ես կը կասկածիմ թէ մի գուցէ գործը դժուարացնելու ծառայէ: Հետեւաբար կառաջարկեմ ես վերցնել բանաձևին վերջին մասն, և կը խնդրեմ որ զայն վերցնելով բանաձևը բուէի զնէք:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Վերջին նստէն ետք երբ Պատգամաւորութիւնը Ս. Պատրիարք Հօր ներկայացու, Նորին Սրբազնութիւնն՝ իւր հրատարականին վրայ պնդելու համար՝ երկու գլխաւոր պատճառ ցոյց տուաւ. տկարութիւն և անբուականութիւն: Հիւանդութիւնը շատոնց կայ. Պատրիարք չեղած գիտէինք որ հիւանդ է, բայց այս պատճառը ցարդ չկրցաւ արդեւել զինքն իւր պաշտօնը

շարունակել: Ըսել է հիւանդութիւնը պատճառ չէ հրատարան: Գուրով անբուականութեան, կրնայ սա յստաջ գալ անձնական անկարողութենէ և իրաց վիճակէն: Կարծեմ Երեսփոխանը ինձ հետ համաձայն են բանելու թէ անձնական անկարողութեան խնդիր չկայ՝ քանի որ այսօրան տարուան փորձառութեամբ օժտուած է Նորին Սրբազնութիւնը: Կրնանք սակայն ենթադրել թէ ուստի յստաջ կրնան գալ անբուականութիւն Ս. Պատրիարք Հօր անձին վրայ: Երկու ամիս առաջ Նորին Սրբազնութիւնը հրատարական կուտայ, Ատենայետ Էֆէնտի, որ յայնժամ Ս. Պատրիարք Հօր հետ բանակցելու պաշտօն ունէր, իւր տեղեկագրով կեղբակացնէր թէ՛ Վարչութիւնը Նորին Սրբազնութեան հետ համախորհուրդ այնպիսի ճշդեալ առաջարկ մը բերէ, որոյ ընդունելութեամբ տանելի դառնայ Պատրիարքական պաշտօնը: Այսպիսի առաջարկ մը չներկայացու ցարդ: Գլխաւորաբար Վարչութիւնը ջանալու էր որ Ս. Պատրիարք Հօր հրատարականն ետ առնել տալու գործը զիւրացնէ: Անցեալ օր սրտագամաւորութիւնը Նորին Սրբազնութեան հետ բանակցելով, համաձայնութիւն մը սխալ գոյացնէր, դժբաղդասար այդ ալ չեղաւ: Աւտի, ինչպէս կը տեսնէք, գործն անորոշ վիճակ մ'առած է, և նոյն խի ես այսօր չեմ գիտէր թէ երեքշաբթի օրէն ի վեր Նորին Սրբազնութիւնն իւր պաշտօնը կը շարունակէ՞ վարել՝ թէ ո'չ, զի ինքն Ըստ բանիցս թէ Յունիս 30 էն անդին ո'չ ես եմ Պատրիարք: Եւ կարծեմ կրնար հասկնալ թէ երեքշաբթի օրուան պաշտօն վարելը և այսօրուան պաշտօն չվարելը մեծ տարբերութիւն ունին: Այդ, քանի որ խնդիրն այս վիճակին մէջ է և քանի որ գիտենք թէ ներքին դժուարութիւններ կան որ Ս. Պատրիարքը հրատարակելու կտալիկն, և այս դժուարութիւնն բաւանորոշ համար Վարչական Խորհրդոյ եղած յանձնարարութիւնն օգուտ չեն ունեցած, եթէ ըսեմք Նորին Սրբազնութեան թէ ազգասիրաբար շարունակեցէք ձեր պաշտօնը, և

չխմայնեմք թէ զինքը ճշդ պատճառներուն խելամուտ եմք, և վստահութիւն չաամք նմաց դժուարութիւնն բանալու, ասի Ս. Պատրիարք Հայրը կրկին այն վիճակին մէջ զնէլ է, ինչ վիճակի մէջ որ կը գտնուէր ասկէ առաջ: Աւտի քանի մ'Երեսփոխանը խճեոթս կը ներկայեն առաջարկ մ'որ ահաւասիկ:

«Ազգային ժողովը բացարձակ վճարատահութիւն յայտնելով առ իւր Ամենապատու Նախագահ Սրբազն Հայրն, միաձայն հաւանութեամբ կը մերժէ Նորին Բարձրութեան հրատարականը, և նոր պատգամաւորութիւն մը կուղղէ առ Նորին Բարձր Սրբազնութիւնն՝ խնդրել և ազաչել որ ազգային կամաց առջև բարեհաճի ետ առնուլ իւր հրատարականը վստահացնելով զՆորին Սրբազնութիւնն որ Ազգ. ժողովը պատրաստ է ամենայն փութով բառնալ այն ամեն դժուարութիւնները որ կրնան պատճառած ըլլալ սոյն հրատարակմը»:

- Տ. Կարգաւոր Սեփեան
- Յ. Հեռեւորդեան
- Նշան Վ. Գորգուչ
- Յ. Քերթեւեան
- Գեորգ Վարդապետ
- Յ. Քերթեւեան
- Պ. Կարգաւոր
- Ա. Ա. Սարգսեան
- Կ. Յ. Փառուտեան
- Ս. Ք. Կերթեւեան

Մայր Դիւանին առաջարկած բանաձևին և այս բանաձևին մէջ սա գլխաւոր տարբերութիւնը կայ որ՝ առաջինը կառաջարկէ միայն ընդունել Ս. Պատրիարք Հօր հրատարականը և խնդրել որ շարունակէ իւր պաշտօնը, մինչդեռ վերջինը կառաջարկէ նաև զՆորին Սրբազնութիւնը թէ զինքը նեղող պատճառներն ժողովոյս ուշադրութեան առարկայ եղած լինելով, անյատաղ սխալ բարձուին:

Ուստի կը խնդրեմ որ Ժողովը նկատողութեան առնու այս վերջին բանաձևն :

ԹԻՒՂՊԷՆՏՃԵԱՆ Ն. ԷՖ. — Կարձ է խօսել լինի : Մայր Դիւանին տուած բացատրութեան կերևոյ թէ՛ Ս. Պատրիարք Հօր հրաժարական թէ՛ և սրբող է բայց և այնպէս իր ներքին պատճառներն ունի , որովհետեւ ո՛չ ես և ո՛չ սր կը կարծէ թէ՛ Ս. Պատրիարք Հօր համար հաճոյք մը լինի երկու ամիսը մի անգամ հրաժարիլ . այսպէս կարծելը Նորին Սրբազնութեան վրայ լաւ դաղափար ունենալ չէ . կրնան գտնուիլ այնպիսի պատճառներ զորս բանալը ժողովոյ ձեռնհասութեան վեր լինի , կրնայ ունենալ պատճառներ ալ զոր ժողովս կրնայ բանալ . ես չեմ կրնար համոզուիլ թէ՛ Ս. Պատրիարք Հօր հրաժարելովն արտարին պատճառներն կը բարձուին , ընդհակառակն նորա աւելի պիտի բազմապատկուին . խի այն պատճառներն որոց բարձումը ժողովն կատարմն ունի , առանց զանոնք ի նկատ առնու չեմ կարծեր որ Նորին Սրբազնութիւնը համազօր : Մայր-Դիւանի բանաձևը ընդունելով հանդերձ , ես կառաջարկեմ որ անոր մէջը ներմուծուի պարտաւարականութիւն՝ բանալու համար այն դժուարութիւնն որ Նորին Սրբազնութեան հրաժարման պատճառ եղած են :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Այո՛ , մեր ըսածն ալ այդ է :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Դիւանին առաջարկած բանաձևին մէջ բարեփոխութիւններ մուծանելու հարկ չկայ , վասնզի ժողովն իւր Օրէնքներով ներքին դժուարութեանց դարման տանելու պարտաւարութիւն ունի արդէն . աւսոր յայտնի տարացոյց այն է որ ասկից մի բանի ամխներ առաջ ժողովս ներքին աղէտից դէմ դարմաններ խորհեր է և Վարչութիւնն ալ այսօր անոնցով կզբաղի . ինչ որ հարկն է՝ այն միայն պէտք է ընեմք , աւելորդ են այսօր

ալ միևնոյն բաներուն դառնալ , զի Սրբազան Պատրիարք Հայրը միշտ ձեռնտու եղած է Աղքին ջանկոյր և չեմք կարծեր թէ՛ այսուհետեւ ալ չլինի , ուստի հարկ չեմ տեսներ առաջարկեալ բարեփոխման և կառաջարկեմ քուէի դնել Դիւանին բանաձևն , անոր վերջին մասը ջնջելու պայմանաւ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — Տեարք Երեւոյստանք . իբրև անգամ Ձեր պատգամաւորութեանն՝ կարծեմ կուտար ինձ իրաւունք որ ես ես իմ կարծիքս յայտնեմ պատրիարքական խնդրոյն վրայ : Ձեր պատգամաւորութիւնը պատիւ ունեցաւ ներկայանալ Նորին Սրբազնութեան նոյն օրը՝ յորում դուժարեւոր էր ժողովս և ինչպէս նորա պաշտօնագրէն իմացար , Ս. Պատրիարք Հայրը մերժեց Ձեր և մեր խնդիրն՝ ես առնու իր հրաժարականն : Ի՛նչ էլին ստիպոյն այն պատճառներն որ Նորին Սրբազնութիւնը հրաժարելու ախպած են , և թէ՛ ի՞նչ կարող եմք առնել զայնս բանալու համար . կուզեմ խօսիլ ասոնց վրայ : Ս. Պատրիարքն Հայրն՝ իբր պատճառ իւր հրաժարման՝ միշտ իւր անձնական տկարութիւնը մեր առջև կը դնէր , խնդիր մը որ բողոք տարիներէ ի վեր ծանօթ է ամենեցուն , ասկոյն հանրածանօթ բժիշկ մի , Տօբթ . Թիրեարեան Էփէնտի , համարձակեցաւ պատասխանել Ն. Սրբազնութեան թէ՛ անձնական տկարութիւնը բաւական պատճառ չէր կրնար լինիլ իւր հրաժարման : Ինչ որ պատասխանեց Ն. Սրբազնութիւնը , բաւական զօրաւոր առարկութիւններ չթուեցան Ձեր պատգամաւորութեան անդամոյ , ինչպէս նաև ինձ , պնդել կարենալու համար իւր հրաժարականին վրայ : ժողովոյ մէջ այլ և այլ կարծիքներ կը յայտնուին հրաժարման պատճառներուն նըկատմամբ . ասկոյն ինձ կը թուի թէ՛ ժողովը՝ բնական հետեւնօք՝ իւր պատգամաւորութեան բերնով լրած պատճառին վրայ պիտի քննէ խնդիրն , և ըստ այնմ իւր որոշումը տայ : Եթէ Նորին Սրբազնութիւնը ուրիշ պատճառներ

ուներնար , զայնս պէտք էր պատգամաւորութեան հաղորդէր , որովպի ժողովս ալ կարող ըլլար հեռացնելզայնս : Սրբազան Պատրիարքը պատգամաւորութեան առարկութեանց և ըստիպմանց ընդդիմացաւ միշտ և ըստ թէ՛ չունի ուրիշ պատճառ բայց միայն իւր անձնական տկարութիւնն : Ինձ կը թուի որ Ազգային ժողովը կարող չէ իւր մտադրութիւնը դարձնել ուրիշ խնդրոյ վրայ մինչև որ պատրիարքական խնդիրն իւր օրինաւոր լուծումը չզտնէ : Ինձ կը թուի թէ՛ ժողովը կարող չէ որոշում տալ ենթադրութեանց վրայ յենելով . հոս պաշտօնական իրողութիւն մը կայ . Ս. Պատրիարք Հօր հրաժարման պատճառը պաշտօնապէս տեղեկագրուած է ժողովոյն , այդ պաշտօնագրէն դուրս ելնել և ենթադրական պատճառներու յենելով որոշում տալ արամարանական չէ և ժողովոյս ալ իրաւունքն է , բանի որ Նորին Սրբազնութեան հրաժարումը հիւանդութեան կամ անձնական տկարութեան վրայ հիմնուած է , և բանի որ ժողովս ուրիշ պատճառ ալ միայն ունի ընկերք , այն է՝ ոչ միայն չընդունել Նորին Սրբազնութեան հրաժարականն , այլ և խնդրել իրմէ որ շարունակէ իւր հովուապետական պաշտօնն և յարատեւէ իւր ազգափրակական ջանից մէջ , պէտք է ջանալ նաև չյարուցանելու նորա առաջ և ո՛չ մի խոչընդոտան , չընելու և ո՛չ մի զխտաղութիւն և ո՛չ մի այնպիսի խօսք , որ մտածել կամ կարծեցնել տայ իրեն թէ՛ ժողովս ունի այլևայլ պատճառներ՝ եթէ ոչ այս անգամ՝ գէթ մի ուրիշ անգամ ընդունելու իւր հրաժարականն : Ազգային ժողովը պարտի պաշտօնապէս մտածել , պաշտօնապէս որոշել և պաշտօնապէս գործել : Ուստի կեզբախտեմ . Ազգային ժողովը այսօր իւր սեղանին վրայ ունի Ս Պատրիարք Հօր հրաժարականն և իւր պատգամաւորութեան տեղեկագիրն , յորում կը տեսնեմք թէ՛ Նորին Սրբազնութիւնն անձնական տկարութեանէ զատ ուրիշ պատճառ չէ յայտնած : Արեւմն կառաջարկեմ խնդրել Նորին Սրբազնութեանն որ

բարեհաճի եւս առնու իւր հրաժարականն , և միանգամայն փափաք յայտնել որ՝ ինչպէս որ Ազգն իւր վրայ վստահութիւն ունի , Ինքն ևս վստահութիւն յայտնէ ժողովոյս վրայ և յառաջ տանի իւր արդիւնաբեր պաշտօնն ի վերջ կտրութիւն սիրելի Ազգին մերոյ : Այս է ահա իմ առաջարկս :

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — Մինչև ցարդ խօսուածներէն կը հասկցուի թէ՛ Ս. Պատրիարք Հայրը հրաժարման համար պատճառներ կամ ունի կամ չունի : Ըսողներ եղան թէ՛ հիւանդութեան պատճառաւ կը հրաժարի , ըսողներ ալ եղան թէ՛ անբաւականութեան պատճառաւ կը հրաժարի , ըսողներ ալ եղան թէ՛ ուրիշ պատճառներ կան որ չեն զրուցուիր , խի Խորին Սրբազան պնդեց թէ՛ հիւանդութենէ զատ ուրիշ պատճառ չունի : Եթէ Ս. Պատրիարք Հօր հրաժարման պատճառը հիւանդութիւնն է , չեմք կրնար բռնադատել որ շարունակէ իւր պաշտօնը , բայց ես չեմ կրնար հաւատալ թէ՛ անձնական տկարութիւնը լինի իւր հրաժարման ստոյգ պատճառը : Փառով անբաւականութեան , եթէ համոզուած է ասոր և խիղճը հանդարտ է , դարձեալ չեմք կրնար պնդել որ իւր պաշտօնը շարունակէ . այս պարագայիս մէջ պէտք է հրաժարի : Բայց ես չեմ հաւատար թէ՛ Նորին Սրբազնութիւնն անբաւականութիւն ունենայ իւր պաշտօնին մէջ : Ստիպոյն ես չեմ կրնար հաւատալ նաև և չէ կարելի լինել որ հրաժարելու պատճառներ չունենայ . եթէ դուք կը հաւատար որ պատճառ չունի հրաժարելու , յայնժամ ոչինչ պէտք է ընել . մեր խիղճը և խելքը մեզ կըսէ թէ՛ Նորին Սրբազնութիւնը պատճառներ ունի հրաժարելու , և եթէ դուք ալ կը հաւատար ասոր , աւելորդ է վստահութիւն յայտնել Նորին Սրբազնութեան և աղաչել պաշտօնը Նմա որ իւր պաշտօնը շարունակէ , զի մինչև հիմայ ոչ որ անխտահութիւն յայտնած է : Բայց թէ՛ ինչպէ՞ կը հրաժարի Ս. Պատրիարք Հայրը , ապի լաւ կը հասկնար եթէ մտիկ ընէր սա ա-

ուսկը : Տու՛ն մը պիտի չինեմ , ճարտարապետ մը կը կանչեմ , և կըսեմ նմա , — Քեզի կը յանձնեմ այս տան շինութիւնը . բայց , ճարտարապետը կը պատասխանէ . — Ո՛ւր է փայտ , կիր , քար և այլն . բայց ես կըսեմ , չէ՛ , ստանց հարկ չկայ , դու բան մը չինէ՛ , բայց նա չունի տան կառուցման համար կարեոր եղած նիւթերը որ զիս գոհացնէ . այս պորադայիս մէջ պնդել նմա որ անպատճառ տուն մը չինէ մեզի , խելքի գէմ չէ՛ : Այս պէս ալ առանց բռնապաշտ Ս. Պատրիարք Հօր հրաժարման պատճառները , պաշտօնդ շարունակէ ըսել Նմա , խելքի ալ գէմ է , խղճի ալ : Ուստի կեզրակոտնեմ , Ս. Պատրիարքը հրաժարելու պատճառներ ունի , և այնպիսի պատճառներ՝ դոր և ոչ մէկի կրնայ յայտնել և ոչ Վարչութեան , և ոչ ալ պէտք է ըսէ զանոնք : Իրաւ է թէ , սակից առաջ ժողովս խոստացած է Նորին Սրբազնութեան , ներքին դրժուարութիւնները բռնադառնելու և իւր ծանր բեռը թեթեւցնել , բայց գործադրութիւն չէ եղած : Արդ , ես կառավարեմ որ փոխանակ իւր հրաժարականը միայն մերժելով պարզ կեզծաւորութիւն մը ըրած լինելու , նախ Զանաթ Քր հրաժարման բուն պատճառները բռնադառնելու . այդ պատճառներուն ինչ լինելն ալ բիշ չատ խելք ունեցող Երեսփոխան կրնայ ինքնին հասկնալ , զանոնք բացարձակապէս յայտնելու հարկ չեմ տեսներ , բայց եթէ այսպիսի նուրբ բաներու խելքերնիս չի հասնիր , անոր ըսելիք չունիմ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Փանոսեան Էֆէնտի շատ գեղեցիկ խօսեցաւ , շատ տրամաբանական էին իւր ըսածները , և ես որ գոցէն կանցնէի խնդիրը , նա բացայայտ խօսեցաւ ամեն ինչ : Ինչպէս տեսաք իմ առաջարկութեանս մէջ , կուզէի յանձնարարել Վարչութեան որ մինչև յառաջիկայ հինգշաբթի հարգէ մեզ իւր բանակցութեան արդիւնքը : Նորին Սրբազնութիւնը հարկաւ հրաժարելու պատճառներ ունի և տարակույս չկայ թէ՛ մինչև որ չբարձուին այդ պատճառները , չկրնար գործել : Ես այս խօսքերը կըսեմ չէ թէ Նորին Սրբազնութեան հրաժարումն արդարացեալու համար , այլ որպէս զի իւր դէմ ելած բոլոր արգելքները բարձուին : Առանց հրաժարման պատճառները լաւ ի ընկն առնելու , եթէ՛ հրաժարականդ չեմք ընդունիր , գնա՛ գործէ՛ , ըսեմք , զիւրութիւն ընծայած չեմք լինիր Նմա , իսկ եթէ վերջապէս ստիպուիմք ակամայ ընդունիլ Նորին Սրբազնութեան հրաժարականն , յայտնում այս հրաժարման խնդիրն իւր յաջորդին օրով ալ շարունակ երեան պիտի գայ , զի սա չպիտի գիտնայ թէ՛ ի՞նչ ուզուի զիտի բուն և Սրբազնութիւն պիտի բուն և Սրբազնութիւն գայնէ : Ուստի կը կրկնեմ առաջարկս , մերժել Ս. Պատրիարքի հրաժարականն և յանձնարարել Վարչութեան որ իւր բանակցութեան արդիւնքը բերէ մեզ մինչև յառաջիկայ հինգշաբթի :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք Դիւանին բանաձեւին վրայ Երեսփոխանաց յայտնած կարծիքներն ու տրուած բացատրութիւնքն , եւ կը տեսնէք որ Տ. Խորէն Արքեպիսկոպոս կեզրակացնէ՛ սահմանաօրել խնդիրն ժողովոյս ներկայացեալ պաշտօնական գրութեանց իմաստին մէջ , եւ հետեւաբար՝ փոխադարձ վստահութեան յայտարարութեամբ՝ մերժել Ամեն Ներսէս Պատրիարքի հրաժարականն : Այս առաջարկն կատարելապէս համեմատ է Դիւանին բանաձեւին , ի բաց առեալ անոր վերջին մասն , որոյ բարձուի խնդրեց Թորոսեան Էֆէնտի բազմաթիւ ձայնակիցներով : Իսկ Քափաճեան Էֆէնտի առաջարկն՝ դոր դարձեալ կրկնեց վերջին անգամ , մեր բանաձեւէն սա տարբերութիւնն ունի որ Վարչական Խորհրդէն ութ օրուան միջոցի մէջ տեղեկագիր մը կը պահանջէ , Ս. Պատրիարքին հրաժարման պատճառներուն նկատմամբ նորա բանակցութեանց արդիւնքին վրայ : Նոյն բանը կը

պահանջէ գրեթէ՛ եւ Փանոսեան Էֆէնտի , սա տարբերութեամբ որ Ս. Պատրիարք Հօր հրաժարման մասին որոշում տալէ յառաջ պատճառներն իմանալ կուզէ , մինչդեռ Քափաճեան Էֆէնտի հրաժարականն այժմէն մերժելով պատճառաց քննութիւնն ետքի կը թողու : Սուրբնեան Էֆէնտի ալ իւր տասնի չափ ձայնակիցներով կառավարիչ վստահացնել զՊատրիարք Սրբազան թէ ժողովս ամենայն փութով պիտի բռնայ իւր հրաժարման տեղի տուող բոլոր պատճառներն : Թիւղպէնտճեան Էֆէնտի կընդունի այս իմաստը , բայց զայն չափաւորելով Դիւանիս բանաձեւին մէջ յաւելուլ կառավարիչ :

Եւ սակայն , ինչպէս ըսաւ Թորոսեան Էֆէնտի , քանի որ Վարչական Խորհուրդը կըսէ թէ՛ բանակցութեան մէջ եմ Ձեր յանձնարարութեան նկատմամբ , բայց դեռ չաւարտեցաւ որպէս զի արդիւնքն առ Ձեզ հաղորդեմ , ի՞նչ հարկ կրկին յարձնարարելու Վարչութեան դոր ինչ արդէն յանձնարարած եմք : Եւ եթէ լաւ կը յիշէք , Ատենապետաց Դիւանին տեղեկագիրը որ Պատրիարքական պաշտօնը դժուարացնող պատճառաց բարձման հարկը ցոյց կուտար , միայն ներկայ Պատրիարքին՝ Տ. Ներսէս Սրբազանին՝ համար չէր այն , այլ ընդհանուր կերպիւ ներկայ եւ ապագայ Պատրիարքաց համար : Հետեւաբար կերելի թէ՛ ժողովն աւելի պատշաճ կերպիւ այդ գործը ձեռք առած կը լինի , եթէ առանց կցելու զայն հրաժարման խնդրոյն , մերժէ նախ Ս. Պատրիարք Հօր հրաժարականն , եւ իւր Դիւանին միջոցաւ պահանջէ Վարչական Խորհրդէն որ փութացնէ իւր բերելիք ճշդեալ առաջարկը : Բայց ասոր համար կրկին որոշում ընելու հարկ չկայ , զի արդէն որոշուած՝ յանձնարարուած՝ եւ ձեռնարկուած խնդիր է :

Իսկ տասն Երեսփոխանաց Սուրբնեան Էֆէնտի ձեռք ներկայացեալ առաջարկն , որ է՛ Ս. Պատրիարք Հօր հրաժարականը մերժելով հանդերձ , վստահութիւն տալ Նորին Սրբազնութեան թէ՛ ժողովը ամենայն փութով պիտի բռնայ այն ամեն դժուարութիւնքն , որք կրնան պատճառած ըլլալ սոյն հրաժարումը , կարի ծանրակշիռ է , եւ պէտք է որ լըրջօրէն նկատողութեան առնուք զայն , որոշելէ յառաջ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ ժողովը քուէ կուզէ , ուստի վիճարանութեան փակումը քուէի պիտի դնեմ :

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ — Քուէ՛ , քուէ՛ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ ժողովը քուէ կուզէ , ուստի վիճարանութեան փակումը քուէի պիտի դնեմ :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լաւ , բայց բանաձեւին վրայ պիտի ամփոփէք Ձեր խօսքերն :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ես իմ առաջարկիս վրայ պիտի խօսիմ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի հարկէ Ձեր առաջարկութիւնը պաշտպանել պիտի ուզէք , բայց կաղաչեմ որ Դիւանին եւ Ձեր առաջարկած բանաձեւներուն համաձայն բաղդատութիւնն ընէք միայն , վասն զի խնդրոյն մնացեալ մասերը պարզուած են ըստ բաւականի :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Թէեւ Ս. Պատրիարք Հայրն իւր հրաժարման պատճառներն որոշակի չէ յայտնած , բայց մենք կը հաւատամք եւ մեր խիղճը կը վկայէ թէ՛ անյայտ թողուած պատճառներ կան , սակայն կէտ մը կայ որ իմ ուշադրութիւնս շատ կը գրադեցնէ , այն է թէ՛ Վարչութիւնն ասկէ երկու ամիս առաջ եղած որոշումն ինչո՞ւ չներկայացնեք ժողովոյս : Եթէ հոս Վարչութեան անգամնեք թէն մէկը կայ , թող բարեհաճի բացատրութիւն տալ այս մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սուրէնեան Էֆէնտի չեմ կրնար թոյլ տալ որ այդ ձեւին մէջ շարունակէք խօսիլ :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Դիւանը բանաձեւին վրայ խօսք կուտայ, ուստի կրնամ քանի որ չկայ երեսփոխան մը որ չընդունի թէ Ս. Պատրիարքը հրաժարման պատճառներ ունի, աւելի նախամեծար կը համարիմ այն առաջարկութիւնն որ այդ պատճառներուն վրայ ըիջ շատ ակնարկութիւն կընէ եւ կը խոստանայ բառնալ դայնս :

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Դիւանին բանաձեւն ամբողջապէս կընդունիմ վրան յաւելում մ'ընելու պայմանաւ : Որովհետեւ ամենքնիս ալ զիտեմք թէ բաց ի տկարութեան եւ անբաւականութեան պատճառներէն, զորս մերժեցինք, կան նաեւ այնպիսի պատճառներ որ մեզ բացատրուած չեն, պէտք է ինչպէս որ Դիւանն առաջարկեց՝ բացէ ի բաց մերժեմք Ս. Պատրիարք Հօր հրաժարականը. բայց ըսեմք միանգամայն թէ ժողովս պատրաստ է Ձեր պաշտօնը զժուարացնող պատճառները բառնալու, եթէ զիտնայ թէ ի՞նչ են անոնք :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Լաւ, մեր առաջարկութիւնն ալ այդ է :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Իմ առաջարկս Դիւանին բանաձեւէն տարբերութիւն չունի, սկզբմամբ մի են, միայն թէ ես կառաջարկեմ որ մինչեւ ութ օր Ս. Պատրիարք Հօր եւ Վարչութեան մէջ եղած բանակցութեան արդիւնքը ժողովոյս հաղորդուի : Սակայն բարեկամս Իփէքճեան Էֆէնտի չուզեր այս գործը Վարչութեան յանձնել, այլ յանձնախմբի մը :

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — (Ընդմիջելով) Ես այնպէս չըսի :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Լաւ, կառաջարկէ որ Ս. Պատրիարքն ուղղա-

կի Ինքն ըսէ իւր հրաժարման պատճառները, սակայն պէտք է զիտնայ որ ասի ժողովոյ որոշման հակառակ է. ասկէ երկու ամիս առաջ ժողովս Վարչութեան յանձնարարեց Ս. Պատրիարք Հօր հետ բանակցելով ճշդեալ առաջարկ մը ներկայել, բայց նորա մի գրութեանէն կը տեղեկանամք այսօր թէ՛ տակաւին բանակցութեան մէջ է : Ուստի հակասութեան մէջ չիյնալու համար պէտք է սպասեմք որ Վարչութիւնը մինչեւ ութ օր իրեն եղած յանձնարարութիւնը կատարէ : Եթէ մինչեւ այն ատեն զմեզ չգոհացնէ, կրնամք ուրիշ որոշում մ'ընել : Ուրեմն եթէ իմ առաջարկիս երկրորդ մասը Դիւանին բանաձեւին մէջ աւելցուի, կը համաձայնիմ եւ ետ կ'անում իմ առաջարկութիւնս :

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ. — Ս. Պատրիարք Հօր հրաժարականն այս քանիբարորդ անգամն է որ կըբաղեցնէ զժողովս, եւ որոյ յայտնի պատճառն է իւր անձին հիւանդութիւնն : Ինչպէս Գեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոս լաւ խօսեցաւ, այս անգամ եւս Ս. Պատրիարք Հայրն իւր տկարութեանէն ի զատ ուրիշ պատճառ ցոյց չտուաւ, սակայն ինչպէս Փանոսեան Էֆէնտիս լաւ բացատրեց, անշուշտ Նորին Սրբազնութիւնը պատճառներ ունենալու է որ յաճախ կը հրաժարի : Այս պատճառներն որոնելու համար շատերը զանազան կարծիքներ յայտնեցին, բայց խնդիրը երկարելու հարկ չկայ : Եթէ կը հաւատամք անձնական տկարութեան որ քանի տարիներէ ի վեր Նորին Սրբազնութեան անձին վրայ ծանրացած է, պիտի հաւատամք նաեւ, որ չափազանց աշխատելու անկարողութիւնն ալ իւր վրայ կը տիրէ : սակայն մենք ամենքս ալ կը նկատեմք որ Նորա անձին վրայ շատ մը ազդային գործեր ծանրաբեռնեալ են եւ հետզհետէ կը ծանրանան աւելի ծանրալիչիս պատճառներով, զորս չեմ ուզեր բացատրել : Ար տեսնեմք որ մինչդեռ Ս. Պատրիարք Հայրն ազդային կենսական խնդիրներով կըբաղի, ստիպուած է միանգա-

մայն առօրեայ ընթացիկ գործերով ալ զբաղիլ. եթէ մարդ երկաթէ ալ շինուած ըլլայ, այս վիճակին չէ կարող զիմանալ . . . :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջելով) Ի՞նչ կընէ ուրեմն Վարչութիւնը :

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ. — (Շարունակելով) Եթէ կուզէք որ Ներսէս Սրբազան Ազգը կառավարէ, անոր վրայ ծանրացած բեռը թեթեւցնելու է : Ուստի կառաջարկեմ այս վստահութիւնը տալ Նորին Սրբազնութեան, Դիւանին բանաձեւին մէջ աւելցնելով դայնս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը չփոթեցաւ, պատճառաբանութիւններ պարզելու ատենը չէ. այս պահուն ժողովոյս ընելիքն է հրաժարականը մերժելու համար լաւագոյն բանաձեւն որոշել. իսկ յայտնուած կարծիքները՝ Վարչութեանէն սպասուած առաջարկին կը վերաբերին աւելի, եւ այժմու խնդիր չեն :

Բանաձեւ մը կայ Դիւանին կողմանէ առաջարկեալ, ինչպէս նաեւ ուրիշ մի քանի առաջարկութիւններ զորս լսեցիք, խնդիրն անոնց բաղադրութեան վրայ միայն կը կայանայ. իսկ հրաժարման դարմաններուն վրայ խօսիլ՝ ետքի գործ է :

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Չկայ երեսփոխան մ'որ չզիտնայ թէ Ս. Պատրիարքը պատճառներ ունի. կան այնպիսի պատճառներ զոր բերան չեմք կրնար առնուլ, այլ միայն հիւանդութիւնն մ'է մէջ տեղը գրուած. սակայն մեք անցեալ նստին պատգամաւորութիւն մը զրկեցինք Նորին Սրբազնութեան՝ համոզելու համար Ձինքը որ ետ առնու հրաժարականը. զժբաղդաբար այդ պատգամաւորութիւնն անյաջող պատասխան բերաւ. հիմայ ալ ինչ որ ընեմք, Ս. Պատրիարքը նոյն պատասխանը պիտի տայ : Պահ մը մտածեմք թէ՛ եթէ իւր հրաժարականին վրայ պնդէ, կրնա՞յ Ազգը հանդուրժել, եւ թէ ի՞նչ ընել հարկ է յայն-

ժամ : Չմեզ զբաղեցնելու կէտ մ'է ասի, զի ամեն ոք բացարձակապէս զիտէ թէ Նորին Սրբազնութիւնն ետ չպիտի առնու զիւրաւ իւր հրաժարականը : Տ. Մկրեան Հօր առաջարկին մէջ կէտ մի կայ որ ուշագորութիւն կը պահանջէ : Նորին Գերապատուութիւնը կըսէ թէ՛ Ս. Պատրիարք Հօր պաշտօնի սահմանը ընդարձակելու է . . . :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Ընդհակառակն նեղցնելու է ըսաւ :

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — (Շարունակելով) Ուստի եթէ հարկ ըլլայ, ընդարձակեմք նորա գործոց սահմանը կամ նեղցնեմք, որն որ կուզէ, եւ ի՞նչ զոհողութիւն որ կարելի է ընեմք, որպէս զի Նորին Սրբազնութիւնը կարենայ շարունակել իւր պաշտօնը :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Դիւանը բանաձեւէն դուրս խօսք չտալու յայտարարութիւն մը կընէ. արդեօք վիճարանութիւնը այսպէս սահմանափակ պիտի ըլլայ, ասի հասկնալ կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ մեր նախորդ բացատրութիւնը հասկցած էք, նոր բացատրութեան հարկ չկայ :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Երկու բանաձեւ կայ, մին Դիւանին կողմէն առաջարկուած, միւսը՝ մի քանի երեսփոխանաց կողմանէ. եթէ միայն ասոր վրայ պիտի խօսիմք, ասի երեսփոխանաց իրաւունքը բռնաբարել է, վասն զի այսօրուան նիստը մասնաւոր խնդրոյ մը վրայ է, այն է՝ պատրիարքական խնդիրը : Եթէ երեսփոխան մը իւր կարծիքը չկրնայ ազատ յայտնել, ժողովս չկրնար իւր պաշտօնը զոհացուցիլ կերպիւ կատարել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շահպաղ էֆէնտի, սխալ կը մեկնէք Դիւանին յայտարարութիւնը. զուք օրէնսգէտ մ'էք եւ ուրիշներէ զիւրու կրնայիք հասկնալ դայնս Ի սկզբան ժամէն աւելի խօսուեցաւ եւ ոչ ոք արգիլուեցաւ իւր կարծիքը յայտնելու, իւրաքանչիւր ոք իւր առա-

Չարկութիւններն ու դիտողութիւններն յայտնեց եւ խնդիրն ամփոփուեցաւ բանաձեւին վրայ. այժմ ալ կրնան խօսիլ Երեսփոխաններն ամենայն ազատութեամբ, միայն թէ բանաձեւին սահմանին մէջ եւ անոր յարակից պարագայներու վրայ, որպէս զի այսչափ վիճարանութենէ յետոյ կարելի լինի որոշման յանդիլ, առանց խնդիրը ճապաղելու եւ ցրուելու :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Քաւ լիցի, ես հասկըցած եմ խնդիրը, ինչ որ խօսուի հոս, ու զին Ս. Պատրիարք Հօր հրաժարականը ընդունիլ կամ չընդունիլն է, մանաւանդ չընդունիլն, որ բոլոր Երեսփոխանաց եւ համայն Ազգին վտարն է : Ամեն խօսակցութիւն ուղղակի կամ զայս կը շօշափեն եւ կամ անոր յարակից պարագայները : Ուստի կը շարունակեմ :

Ամենքս ալ գիտեմք որ Ս. Պատրիարք Հօրը տասնէն աւելի հրաժարականներ տուած է, որոց երեւութական պատճառն հիւանդութիւնն է միայն, սակից զատ ուրիշ պատճառ լսած չեմք մինչ ցարգ ի պաշտօնէ, սակայն մենք գիտեմք եւ կղզամք որ, ինչպէս Փանոսեան Էֆէնտի լաւ բացատրեց, Նորին Սրբազնութիւնն անուղղակի պատճառներ ունի հրաժարելու : Մինչև հիմայ ամեն անգամ որ Նորին Սրբազնութիւնը հրաժարեցաւ, միշտ այս ձեւով հրաժարականը ետ ա՛ւ ըսինք եւ հրաժարման պատճառներուն որ եւ է դարման չը տարինք : Քանի որ Նորին Սրբազնութեան իւր պաշտօնին վրայ մնալու պէտքն զգալի է, բանի որ կուզեմք որ Նա շարունակէ իւր պաշտօնը, պէտք է դարմանը մտածելք իրաց վիճակին եւ գործադրելք, սակայն թէ ոչ՝ Նորին Սրբազնութիւնը դարձեալ պիտի սնդէ իւր հրաժարականին վրայ, քանզի բեռը ծանր է : Ես կրսեմ թէ, եւ այս ըսելիքս թող Վարչութեան նկատմամբ անպատահութիւն չկարծուի, ներկայ Վարչութիւնն իր մէջ չկրցաւ հաշտեցնել Նորին Սրբազնութիւնը : Ուստի ես կառաջարկեմ մերժել Ս. Պատրիարքի հրա-

ժարականն, եւ խնդրել իրմէ որ՝ պատրիարքական դժուարութիւնքն բառնալու եւ կամ դանոնք դարմանելու համար՝ իւր ընտրած վտահազարի անձերն իրեն խորհրդատու առնէ եւ անոնց անպակասութեամբ այդ դժուարութիւնքը բառնայ :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Դիւանին առաջարկութեան դէմ խօսող Երեսփոխան Տեարք այնպէս կը ցուցնեն թէ՛ Դիւանին բանաձեւին մէջ հրաժարման դէմ դարմաններ չկան. ներուի ինձ ըսել թէ՛ ես այդպէս չեմ ըմբռներ. այդ առաջարկուած դարմանները բանաձեւին մէջ ալ կան : Արդէն ժողովն այս դարմաններն հողալու պէտքն վաղուց ճանչցած եւ Վարչութեան յանձնած է զայն, ուստի ներքին դժուարութիւնքն դարմանելու գործը Վարչութեան ձեռք կը կատարուի արդէն : Մեք այս մասին մեր մէջ չեմք կրնար համաձայնիլ, քանի որ ժողովոյն յանձնարարութեան պատասխանը չէ եկած տակաւին, բայց չեմք կրնար ճշուած բանեցնել Վարչութեան վրայ թէ՛ ինչո՞ւ ցարգ չկատարեցիր քեզ եղած յանձնարարութիւնը, մինչդեռ նա կըսէ թէ բանակցութեան մէջ եմ այս մասին Ս. Պատրիարքի հետ : Ժողովը հակասութեան մէջ կրնայ, եթէ նոյն յանձնարարութիւնը կրկնէ. ուստի ես կրկին կառաջարկեմ Դիւանին բանաձեւն ընդունիլ :

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — Ես Շահպաղ եւ Թորոսեան Էֆէնտիներուն խօսածները միացընելով կրսեմ թէ՛ քանի որ Վարչութիւնը յանձն առած է բանակցիլ Ս. Պատրիարք Հօր հետ, եւ ժողովն ալ յանձն առած է թեթեւցընել Նորին Սրբազնութեան ծանր բեռը, Վարչութեան թողուած որ համոզէ Նորին Սրբազնութիւնն եւ հրաժարման դարմանները տանիլ թէ՛ ասիկայ կրնայ ընել Վարչութիւնը, շատ չնորհակալ կըլլամք, իսկ եթէ չկրնար ընել, այն ատեն ուրիշ յարմարագոյն մարմին մը պէտք է գտնել, որ օգնէ Ս. Պատրիարք Հօր իւր գործողութեանց մէջ : Ասի բնական է՝

երբ Վարչութիւնն եւ Պատրիարք չեն կրնար համաձայնիլ, կամ մին պէտք է իյնայ կամ միւսը. բայց որովհետեւ Վարչութիւնը Պատրիարքէն ընտրուած է, բնական է որ պէտք է զոհեմք առաջինն երկրորդին, քանի որ սորա հրաժարիլը չեմք ուզեր :

ՊԷԿԵԱՆ Յ. ԷՖ. — Խնդրոյն վրայ բաւականէն աւելի վիճարանուեցաւ, ուստի սկսանք տակաւ առ տակաւ հեռանալ օրինաւորութենէն. ես կրսեմ թէ այս առաջարկութիւններուն ժամանակը չէ. Մայր Դիւանին բանաձեւն ասոնց դուռը չգոցէր, եւ ամենուս բաղձանաց համաձայն կը լուծէ այժմու խնդիրն՝ որ հրաժարականի կէտն է, եւ որոյ յայտնի պատճառն հիւանդութիւնն է : Ինչպէս Տ. Խորէն Սրբազան խօսեցաւ, ես ալ այն կարծիքէն եմ որ պաշտօնապէս պէտք է գործեմք, հրաժարման համար պաշտօնապէս մեզ յայտնուած պատճառներէն անդին շանցնելով, եւ մնացեալ կէտերը Վարչութեանէն զալիք առաջարկի պահուն թողլով : Ուստի ես ալ կառաջարկեմ Մայր Դիւանի բանաձեւը քուէի դնել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ ըսելիքներս Փանոսեան Էֆէնտի ըսաւ. ուստի ես չեմ խօսիր :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Է. ԷՖ. — Ս. Պատրիարք Հօր հրաժարման պատճառները մեծաւ մասամբ յայտնի են. ուստի նորէն պաշտօնապէս պահանջել որ իւր հրաժարման պատճառներն, եթէ կան, հրապարակ հանէ, ասի խոհեմութիւն չեմ համարիր ես, զի կրնան ըլլալ այնպիսի պատճառներ՝ զորս չուզէ ըսել : Ուստի ես կառաջարկեմ փոքր յաւելում մ՝ ընել Դիւանին բանաձեւին մէջ, այսինքն ըսել հոն թէ Երեսփոխանական ժողովը կը խոստանայ իւր ձեռքէն եկած անպակասութիւնը չխնայել իր Պատրիարքին ծանր բեռը թեթեւցնելու համար : Այսպիսի խոստում մը ժողովոյս փափաքը կրնայ իրակաւնացնել, Կը մնայ ասդին Վարչութեան յանձ-

նուած պաշտօնն, այսինքն իմանալ Ս. Պատրիարք Հօր հրաժարման պատճառներն եւ անոնց դարմանն առաջարկել. ասի Վարչութեան պարտքն է արդէն, զոր պէտք է կատարէ :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Տ. Մկրեան Հայրը քիչ մ՝ առաջ յայտարարեց թէ՛ խել մը գործեր ծանրացած են Ս. Պատրիարք Հօր հիւանդ անձին վրայ : Ասիկայ մեք ի մօտոյ գիտեմք, մանաւանդ թէ՛ վերջի ատեններս այդ գործերն խիստ բազմացած են : Մեք այսօր քուէի պիտի դնեմք եւ ըսեմք Նորին Սրբազնութեան թէ՛ Ազգն ամբողջ եւ Երեսփոխանական ժողովը կը մերժէ Քու հրաժարականդ, զիտնալով հանդերձ թէ՛ Դու տկար ես, թէ՛ գործերդ խիստ ծանր են : Այս յայտարարութիւնն ընել՝ մանաւանդ մեզ համար՝ շատ դիւրին է. ասով մենք միայն մեր Երեսփոխանական պարտականութիւնը կը կատարեմք : Ես այնպէս կը կարծեմ թէ՛ աւելի աղէկ է ուրիշ բան մ՝ ալ ըսել, այսինքն գիտեմք թէ՛ Ս. Պատրիարքին պաշտօնը շատ դժուարութիւններով շրջապատուած է. մեք պէտք է միասին խորհրդակցիմք թէ՛ ի՞նչ ընել պէտք է զանոնք բանալու համար. դժուարութիւններ կան զոր ժամանակն ու պարագայը կրնան բառնալ, կան դժուարութիւններ ալ որ ներքին են եւ մեր ձեռքն է անոնց բարձու մը : Ս. Պատրիարք Հայրը զիչեր ցերեկ կաշխատի, եւ կրնայ ըլլալ որ զինքը չըջապատող անձինք թէ՛ եւ գործունեայ եւ ազգասէր լինին, չկրնան յաղթել այդ դժուարութեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Խնդրէն կը չեղիք Մելիքեան Էֆէնտի :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Ըսել կուզեմ թէ ներքին դժուարութիւնները բառնալու գործը մեր վրայ պէտք է առնեմք, իսկ արտաքին դժուարութեանց բարձու մը ժա-

մանակին պէտք է թողուիք . ուստի կատա-
ղարկեմ բանաձեւին մէջ յաւելուլ սա թէ՛ ժո-
ղովը պատրաստ է բառնալու այն դժուարու-
թիւնքն որ ծանրացած են Նորին Սրբազնու-
թեան անձին եւ պաշտօնին վրայ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Այդ մեր առա-
ջարկութիւնն է . ուրեմն քուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դեռ եւս վեց երես-
փոխանք խօսք ուզած են , բայց փորձեմք մի-
անգամ , մինչեւ ցարդ յայանուած կարծեաց
համեմատ՝ Գիւանին բանաձեւը մի քիչ բարե-
փոխել , թերեւս այնպիսի կէտի մը հասնիմք ,
որ կարծիքներն հաշտուին : Ուստի աւասիկ
կարգամ Ձեզ բարեփոխեալ բանաձեւը . կա-
ղաչեմ ուշադրութեամբ ունին դրէք :

« Աղգային ժողովս ցաւելով իմա-
ցաւ իւր Պատգամաւորութեան տեղե-
կագրէն որ Ս. Պատրիարք Հայրն պնդեք
է իւր հրաժարականին վրայ :

« Գիտէ նաև թէ Նորին Ամենապատ-
ուութեան անձին տկարութիւնը յանհը-
նարինս կը նեղէ զինքն Պատրիարքական
դահուն վրայ :

« Եւ սակայն նկատելով որ Ամենա-
պատիւ Ներսէս Ս. Պատրիարք Հօր վրայ
ընդհանուր Ազգին անսահման վստահու-
թենէն զատ , ազգային շահուց գլխովին
անհամաձայն է՝ իրաց արդի վիճակին
մէջ՝ Պատրիարքական խնդիր յարուցանելը
կը մերժէ խաղաւ իւր սիրեցեալ Պատ-
րիարքին հրաժարականն :

« Եւ այս առթիւ ևս պատրաստա-
կանութիւն յայանելով ամեն կարելի դիւ-
րութիւն ընծայելու նմա , հրաւեր կը
կարդայ Նորին Սրբազնութեան ազգա-
սիրութեանն , որ Ազգին կամաց առջև

բարեհաճի շարունակել իւր զոհողու-
թիւնն , Պատրիարքական պաշտօնը պա-
հելով : »

ԲԱԶՄԱԹԻՒ ՆՍՍԱՐԱՆՆԵՐԷ. — Շատ լաւ
է այս , ուրեմն քուէ՛ , անմիջապէս քուէ՛ :

ՄԻ ՔԱՆԻ ԶԱՅՆԵՐ. — Քուէի ժամանակը
չէ դեռ , վիճարանութեան շարունակութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում ոմանք քը-
ւէ կաղաղակեն , խկ այլք վիճարանութեան
շարունակութիւնը կը պահանջեն , ուստի վի-
ճարանութեան փակման մասին ժողովոյ կամը
հարցնելու կը պարտաւորիմ :

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտին քուէի
կը դնէ վիճարանութեան փակումը , զոր ժո-
ղովը 4 քուէի դէմ կ'ըն՝ իՈՒՆԻ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ բանաձեւը
քուէի դնել . բայց միանգամ եւս պիտի կար-
գամ Ձեզ զայն , որպէս զի եթէ օրինաւոր դի-
տողութիւն մ'ունիք բառերու կամ շարագ-
րութեան մասին , զայն ալ ընէք , եւ կատա-
րելապէս համոզուիք որ Ձեր խօսելու ազա-
տութիւնն երբէք ճնշուած չէ : Գիւանն եթէ
ստէօլ ազգարարութիւններ ըրաւ պահ մ'ա-
ռաջ , անոնք երեսփոխանաց կարծիքը սեղմե-
լու համար չէին , այլ վիճարանութիւնը խընդ-
րոյն սահմանին մէջ շարունակելու համար էր ,
առանց որոյ օրն ամբողջ կրնայիք վիճարանի ,
բաց որոշման չէիք կրնար յանդիլ :

(Յետ կրկին քննարկման բանաձեւին .)

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Գիւանին ա-
ռաջարկած բանաձեւն ամբողջովին կընդու-
նիմ , միայն կուզեմ գիտնալ թէ Վարչութիւ-
նը դարձեալ պիտի բերէ՞ մեզ իւր բանակցու-
թեան արդիւնքը՝ թէ ոչ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անտարակոյս պիտի
բերէ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ աղէկ զը-
րուած է բանաձեւը , բայց աւելի լաւ եւ բա-
ցորոշ կըլլայ եթէ ըսեմք թէ՛ « ներքին զըժ-
ուարութիւնը պիտի բարձուին » փոխանակ
« ամեն կարելի զիւրութիւն ընծայել » ըսելու :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երբ կարելի բառը
կը դնեմք , խնդիրը կը լուծուի : Երեսփոխա-
նաց մէկ մասը կուղէր որ ըսուի թէ՛ ժողովս
պատրիարքական պաշտօնին ընթացքն արդի-
ւող պատճառներն պիտի բառնայ , իսկ միւս
մասը հարկ չէր գտներ ասոր : Այս պարագա-
յին մէջ միջին ընթացք մը գտնալու էր . ուս-
տի կարելի բառը դրաւ Գիւանն , որ երկու
կողմն ալ կրնայ գոհացնել : Ուրեմն ես կատա-
ղարկեմ որ բանաձեւը անփոփոխ քուէի դնե-
լով ընդունիմք , եւ սոյն քուէն ընդարձակ
պատգամաւորութեան մը միջոցաւ այս ժա-
մուս հաղորդեմք Նորին Սրբազնութեան :

ԻՓԷՔՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ինչպէս պահ մ'ա-
ռաջ յայտարարեցի , նորէն կըսեմ որ՝ եթէ իմ
առաջարկած յաւելումս չդնէք բանաձեւին
մէջ , հակասութեան մէջ պիտի իյնամք : Բա-
նաձեւ մը կատաղարիւր եւ կըսէք թէ Ազգա-
յին ժողովը պատրաստ է Ս. Պատրիարք Հօր
հրաժարման պատճառները դարմանելու , բայց
Նորին Սրբազնութիւնը պատճառ չէ յայանած
որպէս զի մեք կարենամք ըսել իրեն որ՝ քու
պաշտօնավարութիւնդ դժուարացնող պատճառ-
ները բառնալու եւ Ձեզ օգնելու , աջակցելու
պատրաստ եմք : Այս հակասութեանն զմեզ ա-
զատելու համար էր որ սա առաջարկութիւնն
ըրի , այսինքն թէ՛ բանաձեւին մէջ՝ հրաժա-
րականդ չեմք ընդունիր ըսելէ ետքն՝ յաւե-
լումք նաեւ թէ՛ թէ եւ ժողովս պատրաստ է
Ձեր պաշտօնը դժուարացնող պատճառները
բառնալու եւ ամեն կարելի եղած օժանդակու-
թիւն նուիրել Ձեզ , բայց պէտք է գիտնամք
թէ՛ ի՞նչ են զՁեզ հրաժարեցնող պատճառները .
Նորին Սրբազնութիւնը չբացատրեք իւր պատ-
ճառները . . . :

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ. — (Ընդ-
միջելով) Եւ մինչեւ վերջը չպիտի բացատրէ :

ԻՓԷՔՃԵԱՆ Հ. ԷՖ. — (Շարունակելով)
Քանի որ նա չէ բացատրած իւր պատճառ-
ներն , ինչու ելլեմք դարման խոստանամք :
Ուստի կը պնդեմ առաջարկութեանս վրայ ,
այսինքն յաւելուլ բանաձեւին մէջ սա խօսքը
թէ՛ ժողովս պատրաստ է Ձեր հրաժարման
պատճառները բառնալու , եթէ հաճիք բա-
ցատրել զայնս : Եթէ այս յաւելումը չլինի բա-
նաձեւին մէջ , ժողովը վերջին ծայր ծիծաղելի
հակասութեան մը մէջ ինկած պիտի լինի :

ԹՈՐԳՈՄԵԱՆ Պ. ԷՖ. — Կը կրկնեմ այս
առաջարկութիւնը . Ս. Պատրիարք իր հրա-
ժարման պատճառները բացատրելու է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ չկար այլ ես
բացատրութիւն տալու , եթէ Իփէքճեան Էֆ.
չըսէր թէ՛ ժողովը ծիծաղելի հակասութեան
մէջ պիտի մտնէ , և մտքերը չփոթել չկար-
ձէր :

Իփէքճեան Էֆէնտի առաջարկած կէտն
արդէն դարձադրութեան վրայ է , պէտք է
լաւ հասկնալ զայս : Ժողովը Վարչական Խոր-
հրդոյ յանձնած է՝ պատրիարքական պաշտօ-
նը ներքին դժուարութիւններէ ազատելու հա-
մար բանակցել Ս. Պատրիարքին հետ և ճըշ-
դեալ առաջարկ մի բերել : Արդ քանի որ Վար-
չութիւնը այսօր կը յայտարարէ թէ՛ բանակ-
ցութեան մէջ է այդ մասին Ս. Պատրիարք
Հօր հետ , Պատրիարքն եթէ ունի պատճառ-
ներ՝ պիտի յայանէ զանոնք անշուշտ Վարչա-
կան Խորհրդին , որ անոնց վրայ չտիկելով
բարձման դարմաններուն նկատմամբ առաջարկ
մը պիտի բերէ մեզ : Հետեւաբար ժողովը ծի-
ծաղելի դրոյ մէջ չկրնար լինալ զայն այսօ-
րուան հրաժարականի խնդրոյն չընդգրկելով ,
թէ և Իփէքճեան Էֆ. այնպէս կարծել ուզէ :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Հ. ԷՖ. — Իփէքճեան Էֆ.
զժողովն հակասութեան մէջ կը գտնէ , բայց
կարծեմ բանաձեւն ունի իւր մէջ արդէն Նորին
Սրբազնութեան հրաժարման պատճառները
բառնալու իմաստն , երբ կըսէ թէ՛ « ամե .

կարելի դիւրութիւն ընծայելու պատրաստ եմ . . . ասոր մէջ ո՞րն է հակառակիւն , ես չկրցի հասկնալ . ուրեմն կառաջարկեմ քուէի դնել բանաձեւը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պարագոյ մը կայ , այն ալ նկատողութեան առնումը : Ատենասպետ Էֆէնտիին տուած բացատրութիւնները բերանացի են միայն , չկրնա՞ր ըլլալ որ բանաձեւին մէջ անցուի թէ՛ հրաժարման պատճառները բառնալու հոգը Վարչութեան տրուած է արդէն : Ար տեսնեմ որ թիւրիմացութիւն մը կայ . ի՞նչ որ կը պահանջուի՞ Գիւանին բերնին մէջը կայ , միայն գրաւոր բանաձեւին մէջ կը պակսու Յթէ այս բացատրութիւնը բանաձեւին մէջ աւելցուի , խնդիրը կը պարզուի :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ ՊԷՅ — Բանաձեւին վրայ դիտողութեան կէտ մի ունէի , այն էր թէ՛ բանաձեւին մէջ հրաժարման պատճառները պիտի բարձուին ըսուած է , բայց՝ ինչպէս քիչ մը առաջ իբր պատգամաւորութեան անգամ յայտնեցի՞ Ս. Պատրիարք Հոյրը իբր պատճառ՝ իւր հիւանդութիւնը ցուցած էր միայն , զայս Գիւանն ալ ընդունած է , որովհետեւ բանաձեւին մէջ ըսած է թէ՛ զիտեմք որ հիւանդ էք , և այլն : Ուստի կառաջարկեմ նախ սա կէտը բուէի դնել թէ՛ տկարութիւնը հրաժարման իբր պատճառ պիտի ձանչցուի , թէ ոչ :

ՋԱՅՆԵՐ. — Քուէ՛ , քուէ՛ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ ՊԷՅ. — Ներեցէ՛ք որ խօսքս աւարտեմ :

Ինձ կը թուի թէ՛ ամենուս մտածումները մի և նոյնն է : Գիտեմք որ հրաժարման պատճառներ կան , բայց բանի որ պաշտօնապէս չեն հաղորդուած մեզ , պարտաւոր չեմք զայնա ի նկատ առնուլ : Շատ լաւ կը լինի որ Գիւանին առաջարկած բանաձեւը ընդունիմք , ես որ կառաջարկէի թէ՛ մինչև որ պատճառները պաշտօնապէս չյայտնուին , անոնց նկատմամբ խօսք չլինի , ուրախ եմ տեսնելու որ Գիւանին առաջարկած բանաձեւն ալ մի և նոյն տրամաբանութիւնէն հետի չէ : Բայց որպէս զի հա-

մաձայնութիւն գոյանայ ժողովոյս մէջ , կը միարանիմ այն Երեսփոխանաց հետ՝ որ Վարչութեան յանձն առած պաշտօնի մասին ակնարկութիւն մը յաւելուլ առաջարկեցին , իսկ գալով անոնց՝ որ փափար յայտնեցին Ս. Պատրիարք Հօր աջակցելու , կըսեմ թէ՛ այս փափարն Ազգային ժողովոյս համար այնչափ բընական սրտար մ'է , զոր խոստանալն աւելորդ կը համարիմ : Մանուանդ թէ՛ մինչդեռ մեք այդ խնդիրը Վարչութեան յանձնած եմք և Վարչութիւնը բանակցութեան մէջ եմ , կըսէ , ի՞նչպէս անոր կարծիքը չըսած կրնամք՝ մեր որոշման հակառակ՝ հրաժարման դարման տանելու ելնել : Ուստի կառաջարկեմ Գիւանին բանաձեւին մէջ սա յաւելուածն ընել թէ՛ «Ժողովը պատրաստ է ամենայն սիրով կատարել ի՞նչ առաջարկ որ Ս. Պատրիարք Հոյրը Վարչութեան հետ համախորհուրդ ժողովոյս կը բերէ և դարման կը խնդրէ : »

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Պատրիարք չկայ որ Վարչութիւնը հետը բանակցի :

ՋԱՅՆԵՐ — Քուէ՛ , քուէ՛ , ժամանակը կանցնի , բաւական է սցառափ վիճարանութիւն կանցնի :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Վերջին բացատրութիւն մ'ունիմ . . . :

Սուրենեան Էֆէնտի խօսիլ կուզէ , բայց յամենուստ քուէ կը խնդրեն , և վիճարանութեան շարունակութեանը դէմ զժգոհութեան ձայներ բարձրանալով աղմուկ կը տիրէ ժողովոյն մէջ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Քանի որ կարգիլէք զիս խօսելէ , կը բողբեմ Ձեր տալիք որոշման դէմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Աղմուկն հանդարտեցնելով) Բանաձեւին վրայ վերջին անգամ եղած զխոտղութիւնք ալ սպառեցան , խօսուածներէն սա հակցուեցաւ թէ՛ Երեսփոխանաց մէջ մտա մը կայ , որ բանաձեւին մէջ ակնարկութիւն մը յաւելուլ կուզէ այն իմաստով թէ՛ զժողովութեանց բարձման համար պաշտօն

առած է Վարչութիւնը Ս. Պատրիարք Հօր հետ բանակցելով դարմաններ առաջարկելու ժողովոյս :

Բանաձեւին մէջ զայս ալ յաւելցնելու համար անոր երրորդ սարբերութիւնը ստալէս զրեւ հարկ կը վնի :

« Եւ սակայն նկատելով որ Ամենապատիւ Ներսէս Ս. Պատրիարք Հօր վրայ ընդհանուր Ազգին անսահման վստահութենէն զատ , ազգային շահուց գլխովին անհամաձայն է՝ իրաց արդի վիճակին մէջ Պատրիարքական խնդիր յարուցանելու և թէ՛ Վարչական Խորհուրդն՝ ըստ որոշման Ազգ. ժողովոյ՝ որ ինիստ Ա. բանակցութեան մէջ է ընդ Ս. Պատրիարքին , կը մերժէ իսպառ իւր սիւրեցեալ Պատրիարքին հրաժարականն : »

Այս ձեւով՝ վերոյիշեալ ակնարկութիւնն ընել ուղող Երեսփոխանք ալ գոհ կը լինին , եթէ ժողովն հաճի բանաձեւին մէջ յաւելուլ զայն : Իսկ անկէ անդին չեմք կրնար անցնիլ , վասն զի այն ատեն հրաժարման պատճառներուն եւ զայն մերժելու տեսակէտներուն կը դալիմք , մինչդեռ հրաժարականը մերժելու մասին Երեսփոխանաց մէջ ոչ ոք կայ հակա կարծիք , բայց պատճառներուն և տեսակէտներուն նկատմամբ կարծիքները կրնան մեծապէս տարբերիլ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ժողովը անել ձամբու մէջ կը մտնէ , Պատրիարքին այդ ձեւով բանաձեւ չերթար . . . :

Երեսփոխանք դարձեալ կը յուզուին և ժողովոյ մէջ աղաղակն ու աղմուկը կը տիրէ : Ատենասպետ Էֆէնտի ի ձայն զանգակի՝ շփոթութիւնն հանդարտեցնելով բարեկարգութիւնը կը վերահաստատէ , և խօսքը կուտայ Տ. Մատթէոս Եպիսկոպոսին , զոր ուղած էր արդէն :

Տ. ՄԱՏԹ. ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Հրաժարման պատճառները՝ քողարային և ազգա-

յին՝ երկու տեսակ կրնան լինիլ . եթէ զուտ քողարային պատճառները չեմք կրնար լսել , զուտ ազգային պատճառները կրնամք լսել հոս , ինչո՞ւ խոտովակէ խոտովակ մանուածոց ձանապարհաց մէջ կը մտնեմք . ի՞նչ որ Ազգային շրջանակին մէջ է՝ Ս. Պատրիարքը կրնայ զանտք բերել հոս և խօսիլ , եթէ կրնամք ընդունիլ , կընդունիմք , ուրեմն ինչո՞ւ խնդիրը կը շփոթեմք և կը կարծեմք թէ՛ ինչպէս որ քողարային պատճառները չկրնար բերել հոս , նոյնպէս և ազգային պատճառները չկարենայ բերել : Ուստի ես կառաջարկեմ որ Ն. Սրբազնութիւնը մէկդի թողու քողարային պատճառները և՛ իբր փորձառու Արքեպիսկոպոս մը՝ ներքին դժուարութեանց պատճառները ժողովոյս ներկայէ , որպէս զի խորհիմք և անոնց դարմաններ դտնեմք : Մեք զայս խնդրելու եմք Ն. Սրբազնութենէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կողաչեմ , Երեսփոխանք Տեարք , հանդարտեցէ՛ք և ուշադրութիւն ըրէ՛ք խօսքերուս , զի Ձեր մէջ թիւրիմացութիւն կայ : Երեսփոխանք զիրար չհասկընալ սկսան , զի վիճարունելու համար հանդարտութիւննին կորուսին : Նոյն իսկ Տ. Մատթէոս Եպիսկոպոս սխալ ըմբռնած է բանաձեւին մէջ ըլլալիք փոփոխութիւնը :

Ժողովն ասկից առաջ Վարչութեան յանձնարարած էր որ Պատրիարքական պաշտօնը ներքին դժուարութիւններէ ազատելու համար Ս. Պատրիարք Հօր կարծիքներն իմանայ և այն մասին առաջարկ մը բերէ մեզ , բնականաբար դարմաններուն նկատմամբ : Վարչութիւնն այսօր իւր պաշտօնագրով մեզ կըսէր թէ՛ սկսած է բանակցիլ Ս. Պատրիարք Հօր հետ , բայց իւր բանակցութիւնք գեռ ևս չեն աւարտած : Հետևաբար հարկ չէր մնար ժողովոյս՝ հրաժարականի մասին իւր որոշումը տալու համար սպասել Վարչութենէն գալիք տեղեկագրոյն , զի այդ յանձնարարեալ խնդիր՝ Ներսէս Պատրիարքի անձին համար մասնաւոր , եսլ չէր : Նմանապէս հարկ չկար կրկին որո-

չեալ որ վարչութիւնն այն մասին տեղեկագիրք մը բերէ մեզ, զի արդէն որոշեալ յանձնարարեալ խնդիր է այդ: Եւ յանի որ վարչութիւնն առ ինքն եղած յանձնարարութիւնը կատարելու վրայ է, անոր բերելիք տեղեկագրին ոտթիւ՝ հրատարման պատճառներն ըստ ինքեան պիտի բացայտին և յուզուին, ուստի և այսօր յուզելի խնդիր չէ: Մանաւանդ թէ՛ հրատարման խնդիրը լուծելէ յառաջ՝ թերևս իւր անպատեհութիւններն ունենայ այդ կէտին յուզուին: Ասանց ամենուն վրայ խօսուեցաւ արդէն և կարծիքներն հաշտուեցան: Իսկ վերջին պահուն յուզուած կէտն այն էր թէ՛ ըստ որում Երեւոյսի մասին ամանք կուզէին որ դժուարութեանց բարձրան կէտը վարչ. Խորհրդոյ յանձնուած ըլլալուն ակնարկութիւն մը գանձուի բանաձևին մէջ, ուստի Գրասան ալ՝ անոնց բազմանոց համեմատ՝ բանաձևին երբորդ պարբերութեան մէջ հետեւեալ խօսքերն յաւելցուց. « և թէ վարչական Խորհուրդն, ըստ որոշման Ազգ. Ժողովոյ՝ որ ի նիստ Ա. բանակցութեան մէջ է ընդ Ս. Պատրիարքին, և ըն. »: Եւ այժմ ալ Ժողովին հուանութիւնը պիտի խնդրէ հասկնալու համար թէ՛ կուզէ՞ սոս Երեւոյսին ընել բանաձևին մէջ, թէ ոչ:

Ատենապետ Էֆէնտի այս բացատրութեամբ յուզեալ մտքերը կը հանդարտեցնէ և բանաձևին երբորդ պարբերութեան մէջ վերայիչեալ յաւելուածը Ժողովոյ բուէին կենթարկէ, բայց Ժողովը վեց բուէի դէմ կը ՄԵՐԹԷ մեծագոյն մասամբ յիշեալ յաւելուածը, և չընդունիր բանաձևին մէջ դնել զայն:

ԱՅՏՆԱՊԵՏ ԵՖ. — Աւրեմն կը մնայ նախկին բանաձևն, որոյ համար Ժողովոյ բուէն կը խնդրեմ:

Հետևորար Ատենապետ Էֆէնտին բուէի կը դնէ Գրասանին տաճարկած և ի վերջէ բարեփոխած բանաձևը, (Տես երես 148) և Ժողովն՝ տանոց հակառակ բուէի՝ միաձայն հուանութեամբ կը ՆԳՈՒՆԻ զոյն:

ԱՅՏՆԱՊԵՏ ԵՖ. — Արդ՝ Ս. Պատրիարք Հօր հրատարման խնդիրը Ժողովոյ միահամուռ մերժմամբը լուծուեցաւ: Կը մնայ զայն Նորին Սրբազնութեան ներկայել: Այս մասին Մայր Գրասան ալ պատշաճ կը դատէ որ մի բազմութիւ պատգամաւորութեան ձեռք այսօր անյապաղ ներկայանայ Նորին Սրբազնութեան, և այդ պատգամաւորութիւնը իւր մէջ պարունակէ միանգամայն վարչական Խորհրդոյ և նախկին պատգամաւորութեան անդամներն: Ուստի Գրասան հետեւեալ ցանկը կառաջարկէ, և զայն Ժողովոյ ընդունելութեանը կենթարկէ:

- Տ. Սիւննի Եպիս. Խորհ. Կրօն. գործոց
- Տ. Խորհն Արքեպիսկոպոս
- Տ. Մատթէոս Եպիսկոպոս
- Տ. Գարեգին վարչապետ Թաթարեան
- Տ. Յովհաննէս Քահանայ Մկրեան
- Ս Աղնուոր Էֆէնտի, Խորհ. Գառ. գործոց
- Գ. Ներսէսեան »
- Ղ. Հովնեան »
- Տ. Բարսեղեան »
- Ս. Փարսադեան »
- Տօրթ. Թիրեարեան »
- Մ. Մէլգորեան »
- Ն. Շահպաղ »
- Յ. Պէկեան »
- Յ. Թիւլեան »
- Ա. Սուրէնեան »
- Ն. Թիւրպէնտեան »

Ժողովը կը պահանջէ որ Մայր Գրասան ալ միանայ պատգամաւորութեան հետ, և յիշեալ ցանկին ընդունելով՝ անոր մէջ նշանակեալ անձինքը Մայր Գրասանի անդամոց հետ Պատգամաւոր կը կԱՐԳԷ, պաշտօն տալով նոյն ներկայել անմիջապէս բուէարկեալ բանաձևն առ ԱՍԵՆ. Պատրիարք Ս. Հայրն, և խնդրել յանուն Ժողովոյ՝ որ բարեհաճի շարունակել զիւր պաշտօն:

Ատենապետ կը փակուի ի ժամ 5 1/2:
 Ատենապետ Ատենապետ
 Մ. ՉՉՊԱՆԵԱՆ Յ. ՄԷՐԵՏԷՄ-ԳՈՒՂԻ

ՊԱՏՃԷՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱԳՐԻ

ՈՐ ՅԵՇՈՒԱԾ Է ԱՅՏՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ 136-Ե ԵՐԵՍԻՆ ՄԷՁ

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի և Ազգասէր Անդամք Ընդհ. Ժողովոյ Ազգային Կեդր. վարչութեան.

Տեա՛րք,

Ստորագրեալքս վստահ ըլլալով որ Ձեր բնածիր ազգասիրութեամբ և ազնիւ բարեօրտութեամբ միշտ պատրաստ էք լսել և դարմանել ազգային ցաւեր, ներկայիւս կը դիմեմք առ Ձերդ պատկառելի ատեան այնպիսի խնդրոյ մը համար որ Ազգութեան համար ամենակարևոր և կենսական է:

Այս օրերս մեր սիրելի Ներսէս Ս. Պատրիարք Հօր հրատարականի ցաւալի լուրն իբրև սուր սլաք ինչպէս Ձեր և բոլոր ազգութեան նոյնպէս խոցեց և մեր սիրտեր. եթէ յոյս մ'ունինք որ զմեզ կը սիրուի՛ նա է որ պատկառելի Ժողովդ չէ ընդունած այդ հրատարական, սակայն հաճեցէք լաւ խորհիլ որ անբուժելի պիտ'ըլլայ մեր այս ցաւ եթէ Նորին Սրբազնութիւն պնդէ իւր հրատարականին վրայ և Ժողովդ զայն ընդունի, զոր չեմք յուսար:

Վասնզի ինչպէս երկու ամիս առաջ երբ Նորին Սրբազնութիւն տուաւ իւր հրատարական, պատկառելի Ժողովդ աշխատեցաւ և յաջողեցաւ զայն յետս կուզել տալու դոնէ առ ժամանակեայ, սա.

կայն այժմ որ վերջնականապէս կը պնդէ իւր հրատարականին վրայ, Ժողովդ յանուն Ազգութեան պարտի ընել ինչ որ կրնայ անյապաղ. վասնզի լաւ գիտէք որ Ազգը հաղուագիւտ Հովուի մը խնամքներէն զրկուելու ցաւալի ճգնաժամին մէջ է:

Պատրիարք մը՝ որ պատրիարքական գահուն վրայ բարձրացած օրէն ի վեր իբրև հայր հասարակաց լսեց Ժողովրդեան ցաւերը և անոնց ճշմարիտ թարգման հանդիսացաւ առ մեր բարեխնամ կառավարութիւնն, Պատրիարք մը՝ որ սիրելի և պաշտելի եղած է ընդհանուր Ազգէն, և որ ամեն Հայ պանծանօք կը յիշէ նորա անուն, ի՞նչպէս պիտի կրնաք ընդունիլ նորա հրատարական:

Վասն որոյ կաղաչեմք խոնարհաբար Ձեր պատկառելի Ժողովէն որ բարեհաճի ինկատ առնուլ Նորին Սրբազնութեան հրատարականի բանաւոր պատճառները, աջակից ըլլալ բաժանելով Ն. Սրբազնութեան հետ իւր աշխատութիւնները, որպէս զի ծանրանան յանչափս Ն. Սրբազնութեան տկար և հաղուագիւտ առողջութեան վրայ, թարգման ըլլալ մեր աղերսանոց առ Ն. Սրբազնութիւն, ըսել Նորա և կրկնել, ինչ որ նա լաւ գիտէ, թէ Ազգը Ժողովոյդ հետ չընդունիր բնաւ իւր հրատարական, թէ՛ կը պաղատի թախանձանօք՝ շարունակել իւր այդ ծանր և միանգամայն

քաղցր պաշտօնը, թէ Ազգը կաղաչէ ըզնորին հայրախնամ գթութիւն արտասուելու և հաղարաւոր համբոյրներ նըւիրելով իւր այն սրբազան ձեռաց, որք միմիայն եկեղեցւոյ և Ազգութեան լուսաւորութեան համար աղօթած և գործած են, յայտնեցէք ն. Սրբազնութեան մեր այս զգացումներ, և մեք յուսով ենք որ նա անշտի անդութ չպիտի ըլլայ մեր հեծեծանաց դէմ:

Յուսալով որ պատկառելի Ատենդիկն կատ պիտ'առնու մեր այս խնդրագիր կաղաչեմք տեարք որ հաճիք ընդունիլ

կանխաւ Ազգին և մեր սրտաբուղի շնորհակալութիւնները Ձեր այն ջանից և աշխատութեան փոխարէն զորս պիտի կատարէք Ս. Պատրիարք Հօր հրատարականը յետս կոչելու համար և յուսալով որ Ձեր և Ազգին հետ կրկին պիտ'արժանանք շնորհաւորել զն. Սրբազնութիւնն ի դահ պատրիարքական,

Մնամք Ձեր և Նորին Սրբազնութեան պատրաստական ծառայք և խոնարհ բարեմաղթուք:

1300 Սրբազնութիւնն

ՊԱՏՃԷՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱԳՐԻ

ՈՐ ԱՏԵԱՆԻ ԲԱՑՈՒՄԷՆ ՅԵՏՈՑ ՄԱՅՐ ԴԻՒԱՆԻՆ ԱԻԱՆԴԵԱԼ ԸԼԼԱԼՈՎ, ԸՍՏ ՕՐԻՆ ԶԷՐ ՆԵՐԿԱՑԱՑՈՒԱԾ ԺՈՂՈՎԻՆ

Ամենապատիւ և Ամենասիրելի Սըրբազան Պատրիարք Հայր:

Իւսկիւտարի Հայ ժողովուրդն կուգայ իւր խորին վիշտն յայտնել այն հրատարականին համար, որով Ձեր Բարձրաշնորհ Սրբազնութիւնն թափուր կը թողու Պատրիարքական աթոռն և կը ըզքանէ իւր հօտն զոր սիրոյ և իմաստութեան գաւաղանաւ հովուեց ցայսօր:

Այս հարուած ծանր կը կշռէ Սըրբազան Հայր, մեր սրտին և, աներկբայ եմք, բոլոր Հայոց սրտին, զի Դուք առաջին Պատրիարքն էք որոյ վերայ ամբողջ ազգի մը համակրութիւնքն կը դուրսարին և որոյ ճակատն կը զարգարէ ժո-

ղովրդականութեան անարատ դավնին, զի Դուք քաջ և անձնագիր հովիւ էք Ձեր բանաւոր հօտին և գիտէք տանիլ արածել զնա այն արօտից մէջ որ կարեն նորա կենաց պատկանաւոր ճարակն մատուցանել նմա, և զի մէն մի ճշմարիտ Հայ կը սիրէ և կը պաշտէ զՁեզ:

Սիւն էք լուսեղէն որ կառաջնորդէք Ազգին թշուառութեան և ազիտութեան անապատին մէջ, և խարխիս էիք յուսոյ ոյր վերայ կը հանդէք նա իւր վշտաց մէջ, արդ անհետ կը լինի այդ սիւն և կը խուսափի այդ խարխիս ինչպէս Հայ ժողովուրդն, սրտատրոփ տագնապեալ, չբարձրացնէ մի ազաղակի

Այդ ազաղակ, Ձեր անակնկալ հրա-

ժարականին վերայ պիտի բարձրանայ Հայ ժողովրդեան ամեն խաւերէն և Հոյաբնակ կողմանց ամեն խորշերէն, և իւսկիւտար կը փութայ բարձրացնել զայն իւր մասին յայտնելոյ համար Ձեր Սրբազնութեան պատուական անձին վերայ իւր ունեցած ոչնչով — անհման համարելով և խնդրելոյ որ շարունակէք մնալ Ձեր անաէր անաէրունջ ժողովրդեան գլուխն և տարածել նորա վերայ Ձեր հայրական իմաստուն ու անձուէր հոգածութեան հովանին:

Գիտեմք, Ամենասիրելի Սրբազան Հայր, ծանր է Ձեր պաշտօն և ծանրագոյն կը գործեն զայն պարագայք և վիճակ Ձեր անձնական առողջութեան, սակայն չէք հաւատար որ այն ջերմեռանդն օրհնութիւնք և մաղթանք որք մի թշուառ ազգի սրտէն կեղնեն յեր:

կինն Ձեր առողջութեան ու կենաց համար՝ անօգուտ չեն կորսուիր և անշուշտ կը հաճեցնեն Գթութեան Աստուածն առ Ձեզ Ձեր դժուարատար պաշտաման կարեւոր ոյժն ու կորովն որպէս շնորհած է ազգասիրութիւն և իմաստութիւն, և թէ Ազգն պատրաստ է յօժարափոյթ յանձն առնուլ զոհողութիւններ թեթեւացնելոյ համար իւրովսանն Ձեր ծանրակիր բեռն:

Սրբազան Հայր, լսեցէ՛ք Ազգին ազերսանաց, մի՛ լքանէք Ձեր Աթոռն, մի՛ կտարէք Ձեր ժողովրդեան սիրտն և մի՛ խլէք ինձանէ՛ ներսէսի Պատրիարքութեան նեցուկն ու փառքն:

Մնամք հնազանդ որդիք մեծի Գորովազութ Հօրդ Սրբազանի:

30 Յունիս 1881

Սրբազնութիւնն

ՊԱՏՃԷՆ ԱՍՈՐԻՈՑ ԱՄԵՆ ԿԱԹ. ՓՈՒԱՆՈՐԴԻ ԳՐՈՅՆ

ՈՐ ԱՏԵԱՆԻ ՓԱԿՈՒՄԷՆ ՅԵՏՈՑ ՀԱՍԱԾ ԷՐ ՄԱՅՐ ԴԻՒԱՆԻՆ

Ազգասէր և բարեբար Տեարք Ընդհանուր ժողովոյ

Յայտնի է Ձեր Ազգասիրութեանը որ Ասորեստանեայց ազգափառ Ազգը ի վաղուց հետէ իւր Ազգութիւնն և իւր ցեղը պահպանելու համար շատ չարչարանքներ և նեղութիւններ կրած է, և իւր քրիստոնեայ եղբարց հետ միշտ սիրով վարուած, և մանաւանդ Հայոց Ազ-

գին հետ մէկզմէկու օգնելով և զիրար սիրելով ապրած է: Մենք ալ զայս մեզ օրինակ բռնելով խոնարհաբար նոյն դժբութեան կը ծառայեմք և քիչ ժամանակի մէջ անոր պատուները անձնել կը յուսամք: Բայց ցաւ ի սիրտ կը ըսեմք որ այն յուսացեալ գործերը յառաջ բերելու կարող անձը պիտի կորսնցնեմք եղբր: Ասորոց Ազգէն մեծամեծ անձանց զըրութիւններն առի, որք զարմացմամբ

տեղեկութիւն կը խնդրեն մենէ: Աւա՛ղ, աւա՛ղ, պատտօխանեցի ինձ հարցնող անձանց Ս. Ներսէս չնորհալին կարծես ողջ ըլլար այժմ, վասնզի Հայոց այժմեան Պատրիարքը դրեթէ անոր կը նմանի իւր ըրած մեծամեծ բարիքներովը. բայց որչափ բան պիտի կորսնցնեք Նոբա հրաժարմամբը, չորս մեծամեծ խնդիրներ են, զոր այժմ չեմ կարող Ձեզ

բացատրել. և մեք հրաժարելուն պատճառը չգիտնալով յոյժ տրամեալ եմք Ազգովին:

Մնամ բարեմաղթու:

Ասորուոց Կաթողիկոսական Փոխանորդ

Ապուստոս Նուբեան Յարաբիւն Վրդպ.

1884 Յուլիս 2 Բերա



ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կրօնական գործոց խորհրդական	Գեր. Տ. Սիմօն Եպիսկոպոս Սէֆէրեան
Ներքին գործոց	» Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան Արեւ-դէր
Յարաբերական գործոց	» Միքայէլ » Մամեան
Կրթական	» » Միքայէլ » Մամիկոնեան
Դատական	» » Սերովբէ » Աղնասրեան
Տնտեսական	» » Գարեգին » Մէլիք Արեւ-դէր

ԿՐՕՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոս Սերովբեան
» Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան
» Տ. Յակոբ » Փափաղեան
» Տ. Յովհաննէս Քահանայ Հինքեարալէյնեան
» Տ. Սահակ » Տէր Սարգիսեան

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Ազգ. քսանդր Էֆէնտի Մէրեէմ—Գուլի
Թովմաս » Խօրասանճեան
Կարապետ » Շահապաղ
Պապի » Պապօեան
Սենեքէրիմ » Մանուկեան

ՀԻՎԱԳՈՋԳՈՒՄ ԳԻՅՄՓՁՍ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ

ՀԻՅՈՒՄ ԳԻՅՄՓՁՍ

Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ



ՀԻՅՈՒՄ ԳԻՅՄՓՁՍ

Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ
Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ	Ստորագրողներ